անձրևում է: Նրանք այնպիսի ժեստեր են անում, ինչպիսին որ կանեին քիվի տակ գտնվող մարդիկ՝ վախենալով, որ կթրջվեն: Դերասանների ժեստերը ոչ միայն բնության տարերքն են, պատկերում, այլև գիշերը՝ հստակ և տպավորիչ: Ժրնեի այս պիեսում նույնիսկ հողն ու բնությունն են կենդանանում դերասանների ժեստերի միջոցով: 13-րդ արարում լեյտենանտը շերտավարագույրի վրա նկարում է լեռնային տեղանք և մեկնաբանում է. «Մենք գտնվում ենք այստեղ՝ մեծ մայրու հետևում [...]»: Մայրը, որ մոլորվել և թափառում է խավարում, դիմում է գոյություն չունեցող ծառին. «Մի կո՛ղմ քաշվիր, թող անցնեն: [...] Քո շունչը կմաքրի իմ շնչուղիները, էվկալիպտը կլցվի իմ թոքերի մեջ, իմ շնչառությունը [...]» /Genet, 2000: 180/: Նրա բոլոր ժեստերը, ճշգրտում է Ժրնեն, պետք է տեսանելի դարձնեն անտեսանելի ծառը: Մայրը նույնիսկ ծամում է երևակայական ծառից պոկած երևակայական տերևը:

Այսպիսով, Ժրնեի թատրոնում վառ շպարը, արտառոց ժեստերը, ծիսական խաղը, զրկում են կերպարներին իրենց անհատականությունից՝ վերածելով սիմվոլների, իսկ թատերական գործողությունները՝ հանդիսավոր ծեսերի: Ժեստերը ընդարձակում են բեմական տարածքը, ուր ամեն ինչ հարաբերական է, նաև «կահավորում են» բեմը ծիսականության համար անհրաժեշտ երևակայական իրերով: Եվ վերջապես, թովիչ ժեստերի միջոցով բառերն օժտվում են հոգևոր, քնարական և կախարհական զորությամբ: Միահյուսելով խոսքի գեղեցկությունը երևակայական աշխարհի հետ՝ կրկնապատկում են զգայական տպավորությունները, որպեսզի հայտարարեն՝ դուք թովիչ ժեստերի երևակայական աշխարհում եք՝ թատրոնում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Genet J. Les Bonnes. Paris: Editions Gallimard, 2001.
2. Genet J. Les Nègres. Paris: Editions Gallimard, 2005.
3. Genet J. Les Paravents. Paris: Gallimard, 2000.
4. Genet J. Oeuvres complètes, t. 4: Lettres à Roger Blin. Paris: Gallimard, 1968.

Л. БАРИКЯН – *Коды ритуального театра Жана Жене.* – Соответствие художественных взглядов о ритуальном театре нашли отражение в основном в пьесах “Негры” и “Ширмы”. Ритуалы пьес Жана Жене, в основу которых легли элементы античного театра, тщательно разработанные и преобразованные в новом стиле, являются драматическими средствами трансформирования театрализованного представления в иллюзию, образов в символы, а также создания эстетического театрального мира. В то же время ритуалы отражают социальную,

психологическую, нравственную стороны персонажей, разрешают нравственно-философские вопросы и проблемы самопознания.

Ключевые слова: Жан Жене, «Служанки», воображаемое убийство, нереальный мир, театральный костюм, ритуальная игра, символические персонажи

L. BARIKYAN – *The Codes of Jean Genet's Ritual Theatre.* – The compliance of Genet's ritual theater with the aesthetic views is mainly expressed in the plays “The Blacks” and “The Screens”. The rituals of Jean Genet's plays, which include elements of ancient theater thoroughly designed and modified in a modern style, are dramatic means of transforming the performance into illusion, as well as the characters into symbols and creating an aesthetic theatrical world; at the same time they present the social, psychological and moral aspects of the characters, solve self-awareness and moral-philosophical problems.

Key words: Jean Genet, “Maids”, imaginary murder, unreal world, theatrical costume, ritual play, symbolic characters

**ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՏԵՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՆ ԺԸՆԵԻ «ՇԵՐՏԱՎԱՐԱԳՈՒՅՐՆԵՐԸ»
ՊԻԵՍՈՒՄ**

Այս հոդվածում դիտարկվում է 20-րդ դարի ֆրանսիացի գրող Ժան Ժընեի դրամատուրգիայի առանձնահատկությունները: Դրանք են՝ ծիսական խաղի, պատմության և հնարանքի, պատրանքի և իրականության համադրումը, որոնք անբաժանելի ամբողջություն են կազմում «Շերտավարագույրները» պիեսում: Հիմնավորել ենք, որ «Պատշգամբը» և «Շերտավարագույրները» պիեսներում մերժվում են հեղափոխությունների միջոցով դրական բարեփոխումների հասնելու գաղափարը: Ըստ Ժան Ժընեի՝ հեղափոխությունը պետք է տեղի ունենա մարդկանց գիտակցության մեջ՝ լուսավորվելու և տգիտությունից ձերբազատվելու ճանապարհով: Այլաբանությունը հասցնելով ընդհանրացման բարձրագույն կետին՝ Ժընեի հետագա երկխոսությունը նվիրված է բարու և չարի փիլիսոփայական ճանաչողությանը:

Բանալի բառեր. Ռոժե Բլեն, միայնակ հերոս, ֆրանսիացի գաղութարարներ, արաբական մշակույթ, ինքնության որոնում, անհատական պայքար, պատմական իրադարձություններ, անխորտակելի չարիք, թատերական պատրանք

«Շերտավարագույրները» պիեսը Ժընեն սկսել է գրել 1956թ. սկզբին և, ինչպես միշտ, չգոհանալով իր ստեղծագործությունից, անընդհատ ուղղումներ է արել՝ հետաձգելով դրա հրատարակումը: Բայց միայն վերամշակումների պատճառով չէր պիեսի հրատարակումը հետաձգվում: Թեպետ Ժընեն պիեսը հրատարակելու վերաբերյալ պայմանագիր էր կնքել Մարկ Բարբեզայի հետ և 1956թ. հոկտեմբերի չորսին գրում է Օլգա Բարբեզային, որ գրեթե ավարտել է «արաբի մասին» իր պիեսը և կուղարկի այն իննից տասնհինգ օրվա ընթացքում, այնուամենայնիվ, դժգոհ լինելով վճարվող հոնորարներից, պիեսի ձեռագիրը, որը կրում էր «Մայրերը» վերնագիրը, առաջարկում է «Գալիմար» հրատարակչությանը /Dichy, Bellity, 1991: 23/: Մարկ Բարբեզան հասկանում է կեղծիքը և դադարեցնում է պիեսի հրատարակումը, իսկ Ժընեն նոր ուղղումներից հետո՝ 1961թ-ին, պիեսը հրատարակում է «Արբալետ» հրատարակչությունում: 1961-1966թթ. Ժընեն կրկին աշխատում է պիեսի վրա, որպեսզի համապատասխանեցնի այն բեմականացմանը, քանի որ «Շերտավարագույրները» պիեսն էլ ավելի դժվար էր բեմադրել, քան «Պատշգամբը», որը գրվել է նույն ժամանակաշրջանում: 1966թ. տարբերակի ուղղումները, անկասկած, կրում էին Ռոժե Բլենի ազդեցությունը և

վերաբերում էին բեմական կառույցին՝ առանց էական փոփոխությունների ենթարկելու պիեսի բովանդակությունը: «Եթե ես իմանայի, որ պիեսը կբեմադրեին,- գրում է Ժընեն Ռոժե Բլենին,- ես այն ավելի գեղեցիկ կգրեի»: Հեղինակը նաև հաստատում է, որ «Շերտավարագույրները» պիեսի բեմադրման հաջողությունը ամբողջովին բեմադրիչի վաստակն է: Պիեսը վերամշակվում է ևս երեք անգամ, և, ինչպես նշում է Մ. Կորվենը, «1961թ. առաջին հրատարակությունը, նույնիսկ վերամշակվելով երեք անգամ, մնում է հետագա հրատարակությունների միջուկը» /Corvin, 2000: 257/: Դրանք պայթում են բառերի և սիմվոլներ ստեղծող ծիսական ժեստերի առատությունից: Ինչպես «Պատշգամբը» պիեսը գրելիս, Ժընեն այս անգամ էլ տատանվում է մի քանի վերնագրերի՝ «Մայրերը», «Սաիդը», «Դեռևս շարժվում է» տարբերակների միջև՝ ի վերջո ընտրելով «Շերտավարագույրները» վերնագիրը: Ընդհանրապես զարմանալի չէ, որ Ժընեն ընտրել է այս վերնագիրը, քանի որ շերտավարագույրները յուրաքանչյուր արարի կարևոր դեկոր են: Միանգամայն պարզ է, որ այս վերնագիրը ամենից առաջ վերաբերում է պիեսի կառուցվածքին, այլ ոչ թե բովանդակությանը: Ըստ Ժընեի մտահղացման՝ այն ամենը, ինչ տեղի է ունենում բեմի վրա և բեմից դուրս, դերասանները պետք է նկարեն անադմուկ շարժվող շերտավարագույրների վրա կամ էլ ընդգծեն արդեն ուրվագծված նկարները, ինչը նախ թույլ կտա արագորեն ձևափոխել թատերական տարածքը և հետո ստեղծել իրականության և պատրանքի խառնաշփոթ:

««Շերտավարագույրները», որոնք արդեն կային «Պատշգամբը» պիեսում,- գրում է Մարի Ռեդոնեն,- պատկերում են աշխարհը: Աշխարհը ներկայացվում է այն բանով, ինչը սովորաբար թաքցնում է» /Redonnet, 2000: 195/: Ընդ որում՝ այս թաքստոցներն անհրաժեշտ են, քանի որ կան որոշակի բաներ, որոնք չեն կարող ուղիղ իմաստով ասվել: «Իմ բոլոր պիեսները՝ սկսած «Աղախիները»-ից մինչև «Շերտավարագույրները», որոշակի հորինվածք են, համենայն դեպս ես հակված եմ դրան հավատալուն: Այնուհանդերձ, դրանցում մի քիչ դիվանագիտություն կա, և այս իմաստով դրանք անուղղակիորեն քննարկում են քաղաքականությունը: Պիեսները քաղաքականապես չեզոք չեն: Հասարակության հետ երկխոսության մեջ մտնելը միգուցե միակ հնարավոր ուղին է արվեստի այն գործի համար, որը չի հավակնում ուսանելի լինել» /Genet, 1991: 285/:

«Շերտավարագույրները» պիեսում Ժան Ժընեն քննարկում է գաղութատիրության և ապստամբության թեմաները ընդհանրապես և մերժում է իրականության ռեալիստորեն ցուցադրումը բեմի վրա: Իրականության թատերականացումը (թատրոնը թատրոնում) և թատերական գործողությունը ծեսի վերածելու գաղափարը առկա է Ժընեի բոլոր պիեսներում, ինչը որոշում է նաև սյուժեի բովանդակությունը: «Շերտավարագույրները» պիեսում թատերական իրականության բազմաթիվ

օրինակներ կան, բայց ամենաակնհայտ օրինակը մահացածներն են, որոնք տեսնելու համար, թե ինչ է տեղի ունենում ներքևում ապրողների մոտ, նայում են վերև և կարողանում են խոսել միմյանց հետ մի հարկից մյուսը՝ քննարկելով ապրողների գործողությունները:

«Շերտավարագույրները» պիեսի հիմնական թեմաներից մեկը, որին արդեն ծանոթ ենք «Պատշգամբը» պիեսից, կապված է հեղափոխության ժրնեական գաղափարի հետ. այն է՝ բոլոր հեղափոխությունները «ներքին» պլանում ոչինչ չեն փոխում: Ըստ ժրնեի՝ հեղափոխությունը պետք է տեղի ունենա մարդկանց գիտակցության մեջ՝ մտավոր և հոգևոր արժեքների մակարդակում:

«Պատշգամբը» պիեսում հեղափոխականները նմանակում են իրական իշխանությանը, իսկ «Շերտավարագույրները» պիեսում հաղթանակած արաբները կրկնօրինակում են նախկին գաղութատերերին: Նրանք նմանակում են ոչ միայն եվրոպացիների վարքագիծը, այլև նրանց մտածելակերպը. «Մենք պայքարում էինք [...] հանուն փառքի և նոր կարգերի» /Genet, 2000: 270/: Ոչինչ չի փոխվել, կամ փոփոխությունները արտաքուստ են տեղի ունեցել՝ սահելով մի իմաստից մյուսը: Արաբները վերածվել են եվրոպացիների արտացոլանքների և ընդօրինակում են նրանց: Հագնում են համազգեստ, քայլում զինվորական երթով Մարսելյեզի երաժշտության ներքո, ենթարկվում են հրամանների: «Ոչ մի տարբերություն չկա նախկին և ներկա իշխող ուժերի միջև: Գաղութատիրական բռնատիրությանը հաջորդում են ազգային բռնակարգերը: Հեղափոխությունն այսքանով էլ սահմանափակվում է»:

«Շերտավարագույրները» պիեսում իրար բախվում են տարբեր մշակույթների ու տարբեր խավերի ներկայացուցիչներ, իսկ արծածվող թեմաները բազմաթիվ են, երկդիմի ու խճճված: Պիեսի գործողությունը տեղի է ունենում արաբական երկրում, որը գաղութացված է Ֆրանսիայի կամ այլ եվրոպական պետության կողմից, որտեղ ապստամբություն է բռնկվել: Բնիկները, բարոյական և տնտեսական շահագործման են ենթարկվում՝ աշխատելով եկվորների նարինջենիների և վարդենիների հսկայական պլանտացիաներում: Հարդով լցված խոզի կաշվից հսկայական ձեռնոցը՝ որպես վախի, բռնության և իշխանության խորհրդանիշ, մշտապես կախված է օդում՝ արաբ վարձու աշխատողների գլխավերևում՝ ենթարկելով նվաստացուցիչ հսկողության: Գաղութատերերը տարբերություն չեն տեսնում «գող արաբի և ոչ գող արաբի միջև» /Genet, 2000: 115/: Ըստ նրանց՝ «գողությունը հյուսիսային Աֆրիկայի հասարակության էության մեջ է, – ըստ այդմ էլ՝ որտեղ չկա բարոյականություն ամեն ինչ մեկ է» /Genet, 2000: 111/:

Գաղութաբնակները, որոնք, ըստ ժրնեի մտահղացման, խորհրդանշում են եվրոպացիներին ընդհանրապես, անհանգստացած են վտանգի զգացողությունից. «[...] օդում կոմունիզմի ոգին է թևածում» /Genet, 2000: 111/ և չգիտեն ինչ ռազմավարություն բանեցնեն, քանի որ խորհուրդ չի

տրվում կոպիտ լինել և արհամարհանքով վերաբերվել բնիկներին: «[...] եթե նրանք սովորեն պատասխանել, կարող են սովորել նաև մտածել» /Genet, 2000: 110/: Զարմացնում են երկու գաղութարարների անունները, և նույնքան էլ տարօրինակ 1840թ. կոստյումները, որոնցով նրանք զարդարված խամաճիկների են հիշեցնում: Նրանք զրուցում են խիստ ճշան ծայներով՝ չնայելով մեկը մյուսին, համարյա գոռում են՝ բորբոքված, ինչպես գեներալ Ֆրանկոն, երբ ելույթ էր ունենում իսպանական ռադիոյով: Պարոն Բլանկենզին փորին և հետույքին բրդով լցված բարձեր է կրում, քանի որ նրա տարիքի տղամարդը, որը փոր չունի, արաբների համար չի կարող հեղինակություն լինել:

«Շերտավարագույրները» պիեսի գլխավոր կերպարները՝ Մայրը, Սաիդը (նրա որդին) և Լեյլան՝ Սաիդի կինը, խորհրդանշում են արաբական աշխարհի տեղացի բնակիչներին: Սաիդը, լինելով ծայրաստիճան աղքատ, կարողանում է ամուսնանալ միայն Լեյլայի հետ «[...] հարևան գյուղի և ամբողջ շրջակայքի ամենատգեղ կնոջ հետ» /Genet, 2000: 18/ և մշտապես ենթարկվում է արաբ համագյուղացիների ծաղրուծանակին, ովքեր նրան արհամարհում են աղքատության և կնոջ տգեղության պատճառով: Սաիդը սկսում է գողություններ անել իր համագյուղացիներից՝ մյուս արաբ վարձու բանվորներից, որոնց հետ միասին աշխատում է սրբ Հարոլդի նարնջենիների պլանտացիայում և բանտարկվում է: Հարգանքի արժանանալու փոխարեն Սաիդը փորձարկումների մեջ է: Նա իր աղքատությանն ու կնոջ տգեղությանը ավելացնում է գողության խայտառակությունը, ընդ որում՝ գողությունը ամոթալի աղքատությունից ազատվելու միջոց չէ Սաիդի համար, այլ ներկայացնում է նրա մուտքը ծիսական աշխարհ, որը նրան կտանի ստորացման ամենախոր անդունդը, ընդհուպ մինչև «սրբություն»: Սաիդը՝ ամենաթշվառը արաբների միջից, միակն է, որ իսկապես ըմբոստանում է ամենքի և ամեն ինչի դեմ: Նրա պայքարը համամարդակային է, բայց և արտառոց՝ ընկղմվելով չարիքի մեջ, պայքարում է ընդդեմ համատարած չարիքի: Միայնակ հերոս, որի ըմբոստացումը ուղեկցվում է իր իսկ անկմամբ, անկում, ինչը կցնցի անգամ իրեն նվաստացնողներին, որը կկարողանա փոխել կյանքի իրադարձությունների ընթացքը և կթողնի որևէ նշանակալի հետք. այս է Սաիդի ընտրությունն ու կյանքի կարգախոսը, ինչն էլ փորձում է իրականացնել: Լեյլան՝ ամենատգեղ կինը, որի նմանը աշխարհը չի տեսել, ուղեկցում է իր ամուսնուն դեպի բացարձակ նվաստացում:

Պիեսի հենց սկզբից էլ տեսնում ենք արաբ հասարակության ներկայացուցիչների ստորակարգումը ներսից: Նմանակելով իրենց տերերին՝ արաբները արհամարհում են Սաիդին իրենցից ավելի աղքատ լինելու պատճառով, հետո վտարում են նրան և նրա ընտանիքը գյուղական համայնքից՝ քանդելով աղբանոցի հարևանությամբ գտնվող նրա խարխուլ տնակը: Այսպիսով, դատապարտելով իրենց հայրենակցին,

նրանք պաշտպանվում են հարաբերական արժանապատվությամբ, թեև, Սաիդը գողանում էր իրենցից, իրենք էլ գողանում էին իրենց տերերից: Ապստամբության սկզբնական պատճառը գաղութարարների կողմից բնիկների մարդկային ինքնության ու արժանապատվության բռնադատումն ու բացարձակ նվաստացումն էր, բայց ինչպես հաստատում են գաղութարարները, իրենց արժանապատվության գիտակցումը արաբներին դարձնում է ավելի խելացի: Նրանք դառնում են իրենց տերերի դատավորները, և նրանց հաջողվում է քողագերծել գաղութարարների իրավասությունների արհեստական գերազանցությունը:

Տասներորդ արարից սկսած՝ ապստամբությունն ավելի ու ավելի է բռնկվում, տարածվում և միահյուսվում է Օտրիների ընտանիքի ընթուստացման պատմությանը: Բանակը պիեսում հայտնվում է իններորդ արարում: Լեգեոներները՝ ծագումով օտարերկյա զինվորներ, բայց ֆրանսիական անուններով, պատրաստվում են պայքարել արաբ ապստամբների դեմ՝ կատարելով իրենց ընձեռված պատմական առաքելությունը: Բանակի վերջնական նպատակն է իր մասին ստեղծել վառ կերպար: Դրամատուրգը ծաղրանքով է նկարագրում պատերազմական գործողությունների աստիճանական ծավալումը, անգամ պատերազմական սարսափելի դրվագները ներկայացնում է այլաբանությունների բեկմամբ: Այսպիսով, ապստամբությունը իրական է և անիրական: Լեյտենանտն ասում է իր զինվորներներին. «Ռազմիկը հատկապես պետք է կարգապահ և գեղեցիկ լինի: Նա նրանց խորհուրդ է տալիս միշտ իրենց մոտ հայելի ունենալ և երբեք չդադարել «փայլել և շողալ» /Genet, 2000: 117/, նույնիսկ գիշերը: Եթե անգամ հայելի չկա, ուրեմն թող յուրաքանչյուր մարտիկ ծառայի որպես հայելի ցանկացած մյուսի համար: «[...] թող ձեր պատկերները, թող լինեն այնքան հիասքանչ, որ թշնամին չկարողանա դիմակայել» /Genet, 2000: 182/: Մ. Կորվենը նշում է, որ ժընեն 13-րդ և 14-րդ արարներում նախևառաջ բանակը ներկայացնում է բարոյալքված՝ ի դեմս սերժանտի, որը սպանում է մահմեդական մանկահասակ աղջիկներին, լեյտենանտին, որը քաջություն չունի հայտնելու իր կասկածները գեներալին, որն իր հերթին միայն սնապարծորեն ճառել գիտի. «Թող մեր հաղթանակները, մեր փառքը տարածվի ավելի ու ավելի հարավ» /Genet, 2000: 147/, իսկ հետո «զգեստավորում է» լեգեոներներին հորինված պատերազմական հագուստներով, զինված, այո՛, բայց նաև դիմահարդարված, որպեսզի խտացնի ժամանակը և խուսափի 1950-60 թվականների պատմական իրադարձությունների արտացոլանքներից:

Ռոժե Բլենին հասցեագրված նամակներից մեկում ժընեն գրում է. «Մի քանի մանրամասներով պետք կլինի հիշել Ալժիրը», իսկ մյուս նամակում «Մի՛ անհանգստացեք Ալժիրի առնչությամբ» /Genet, 1968: 406/, ինչը հաստատում է, որ, չնայած որոշակի դժվարություններին՝ ժընեն, պատկերելով Ալժիրի տնտեսական և քաղաքական աղետալի վիճակը,

միևնույն ժամանակ ընդհանրացնում է իր ասելիքն ու տեսակետները. աշխարհը չարիքի թագավորություն է, չարիքն ու մահը իշխում են ամենուրեք, իսկ թշվառությունն ու տգիտությունը նրանց անբաժանելի ուղեկիցներն են: Թեև ժընեն փորձում է խճճել պատմության հետքերը, այնուհանդերձ Ալժիրի պատերազմի դրվագները շատ շոշափելի ներկա են այս պիեսում՝ պլանտացիաների հրդեհում, ջրհորների թունավորում, փոխադարձ բռնության ու սպանության տեսարաններ: Սպանվում է սըր Հարոլդի դուստրը, նաև Կադիջան՝ ապստամբների կին առաջնորդը: Սաիդի մայրը, ասես պատահաբար, խեղդամահ է անում ֆրանսիացի զինվորին՝ Պիեռին: «Տատիկ, մայրիկ», - այսպես է դիմում Պիեռը Մորը, երբ վերջինս օգնում է իրեն փսխել՝ պահելով գլուխը: Այս սպանությունը պիեսի բազմաթիվ դաժան բռնության տեսարաններից ամենահակամարդկայինն է: Արաբական մշակույթում մայրը, որը սպանում է իր երեխային, չարիքի մարմնավորում է և արժանի է նողկանքի ու անեծքի: Թվում է, թե արաբների միջավայրից վտարված Օտրիների ընտանիքի ավագը՝ մայրերից ամենավեհը, չպետք է մասնակցեր օտարների դեմ արաբների պայքարին, բայց այս սպանությունը փաստում է, որ Ալժիրը վերջնականապես ելել է պայքարի: Հաջորդում են Գեներալի և Լեյտենանտի, իսկ պիեսի վերջում՝ Սաիդի սպանության տեսարանները, որոնք ավելի շուտ հատուկ են կինոարվեստին, քան թատրոնին: Գիշերվա խավարում հնչում են կրակոցի ձայներ և Գեներալն ընկնում է անձայն: Սաիդը փախուստի փորձ է անում և հայտնվում է հետնաբեմում: Արաբ ապստամբները կրակում են նրա ետևից: Լսվում է ընկնող մարմնի ձայն... Ֆրանսիական բանակի զինվորական շղթայի ամենաաչքի ընկնող օղակի՝ Գեներալի և ամենաաննշանի՝ Պիեռի սպանությունից հետո ենթադրվում է, որ արաբները հաղթանակ են տանում: Պիեսի վերջում հիմնական կերպարները գրեթե բոլորը մահանում են և հայտնվում բեմի ամենավերևում, որը, սկսած 14-րդ տեսարանի սկզբից, բաժանված է երեք հարկի: Մահացածները անցնում են անտառով, սա նույնն է, ինչ Դանտեի ճանապարհը դեպի դժոխք, և հետո, պատռելով սպիտակ թղթից շերտավարագույրները, որոնք այս հարկի միակ դեկորներն են, հայտնվում են «բացակայության՝ մթնշաղային անցումային տարածության մեջ: «Մահը նրանց համար ամբողջովին հաստատվելու ձև է, ինչպես կերպարներն իրենց արտացոլանքներում» /Dort, 1971: 184/: Կերպարները, այսպիսով, սարսափելի զարմացած են և շատ գոհ՝ հայտնվելով մահացածների հարկում, և ամեն անգամ վկա են դառնում նորեկների տարակուսանքին. «Լա՛վ, լա՛վ, այո՛, այո՛: Այսքան պատմություններ և ինչո՞ւ ոչ, պետք է լավ զվարճանալ» /Genet, 2000: 213/: Մահացածների հարկը ծիծաղի թագավորություն է, որտեղ Մայրը թագուհի է, քանի որ Սաիդը նրա արգանդից է ծնվել: Ծիծաղը ժընեի մոտ մաքրագործող, փրկարար չէ, ընդհակառակը, գրողը այն կապում է ողբերգության և մահվան հետ: Դեռևս վեցերորդ արարի մեկնաբանություններում ժընեն

գրում է. «Ես կարծում եմ, որ ողբերգությունը պետք է ներկայացվի հետևյալ կերպ՝ զարհուրելի ծիծաղ, որը խեղդում է հեկեկանքը, վերադարձնում սկզբնական ծիծաղին, այսինքն՝ մահվան գաղափարին» /Genet, 2000: 306/: Հատկապես «Շերտավարագույրները» պիեսում ծիծաղելի տեսարաններ շատ կան, բայց ժընեի այրող անկեղծությունը, բեմի վրա ասվածն ու ցուցադրվածը այնքան իրական են, որ ծիծաղ առաջացնելու փոխարեն ցնցում են բոլորին:

Մահացածները՝ ապստամբ տղամարդիկ և կանայք, գաղութաբնակները և լեգեոներները, գտնվելով վերին հարկում, նայում են կրկին վերև, որպեսզի տեսնեն, թե ինչ է կատարվում ներքևում՝ ապրողների աշխարհում, քննարկում են միմյանց և մյուս հարկի ողջ մնացած կերպարների հետ և չեն հասկանում՝ հատկապես ինչի համար էին կոչվում: Ի վերջո, «մահացածները հասկանում են և միևնույն ժամանակ հասկացնում են իրենց ժողովրդին (նաև հանդիսատեսին), որ այն, ինչի դեմ չզիտակցելով պայքարում էին, համատարած չարիքն էր, և որից երբեք մարդիկ չեն կարող ազատվել: «Օ՛, չարի՛ք, հիասքա՛նչ չարիք, դու որ մնում ես մեզ հետ, երբ մնացած ամեն բան գրողի ծոցն է կորչում, օ՛, հրաշալի՛ չարիք» /Genet, 2000: 154/:

Այսպիսով, «Շերտավարագույրները» պիեսում ժան ժընեի նպատակն է ներկայացնել Ալժիրի ապստամբության իրական պատկերը և, միևնույն ժամանակ, խճճելով պատմական իրադարձությունները, այն թատերականացնել, դարձնել անճանաչելի և հաստատել, որ աշխարհը պատող չարիքից պետք է ազատվել ոչ թե հեղափոխությունների, այլ լուսավորվելու և տգիտությունից ձերբազատվելու միջոցով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Corvin M. Préface et dossier des Paravents. Paris: Folio, 2000.
2. Dichy A. et Bellity L. La bataille des Paravents: Théâtre de l'Odéon 1966. Paris: IMEC, 1991.
3. Dort B. Genet ou le combat avec le theater: Théâtre réel (1967-1970). Paris: Seuil, 1971.
4. Genet J. OEuvres complètes, t. 6: L'Ennemi déclaré, textes et entretiens. Paris: Gallimard, 1991.
5. Genet J. OEuvres complètes, t. 4: Lettres à Roger Blin. Paris: Gallimard, 1968.
6. Genet J. Les Paravents. Paris: Editions Gallimard, 2000.
7. Redonnet M. Jean Genet, le poète travesti: portrait d'une oeuvre. Paris: Grasset, 2000.

Л. БАРИКЯН – Восстание и театрализованная реальность в пьесе Жана Жене «Ширмы». – Особенности драматургии Жана Жене, а именно, ритуальная игра, синтез реальности и вымысла, согласовывающиеся со стремлением Жене представить иллюзию в качестве реальности, составляют неделимое целое в пьесах «Балкон» и «Ширмы», написанных в один и тот же период. В них опровергается идея достижения реформ революциями. Согласно Жене, революция должна произойти в сознании людей через просвещение и избавление от невежественности. Дальнейший диалог драматурга посвящен философскому познанию добра и зла.

Ключевые слова: Роже Блен, одинокий герой, французские колонисты, арабская культура, в поисках идентичности, индивидуальная борьба, исторические события, нерушимое зло, театральная иллюзия

L. BARIKYAN – The Rebellion and the Theatrical Reality in the Play “Screens” by Jean Genet. – The characteristic features of Genet’s dramaturgy – ritual game, the combination of the real and the unreal, which corresponds to Genet’s pursuit of presenting illusion as reality, make an indivisible whole in the plays “The Balcony” and “The Screens”, written almost at the same time. These plays reject the idea of making reforms through revolutions. According to Genet the revolution must take place in people’s consciousness through enlightenment. The playwright’s further dialogue is devoted to the philosophical cognition of the good and the evil.

Key words: Roger Blin, lonely hero, French colonists, Arab culture, in search of identity, individual struggle, historical events, indestructible evil, theatrical illusion

Վերոնիկ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ՉԱՐԼՁ ԲՈՒԿՈՎՍԿՈՒ ԳՐԱԿԱՆ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
20-ՐԴ ԴԱՐԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Ամերիկյան 20-րդ դարի արձակի աննախադեպ երևույթ էր Չարզ Բուկովսկին: Նա բացեց գրականության մուտքը սոցիալական մարզինալների առջև և ստեղծեց գրական հերոսի կերպարներ, որոնք երբևէ չէր ունեցել ամերիկյան գրականությունը: Բուկովսկին կրում էր բիթնիկական շարժման ազդեցությունը, միևնույն ժամանակ առանձնանում էր նրանցից իր ուրույն կենսափիլիսոփայությամբ, իրականությունը «լուսանկարելու» բացառիկությամբ: Նա համարվում է «անդերգրաունդյան» գրականության հիմնադիր:

Բանալի բառեր. սոցիալական մարզինալ, «անդերգրաունդյան» գրականություն, «լուսանկարչական իրականություն», սյուժետային առանցք, ակադեմիական պոեզիա, «կեղտոտ իրապետություն», իրականության գեղարվեստական ընկալում, բիթնիկական շարժում, անհատի հոգեկան դրամա:

... Գրականությունը խարդախություն է: Ես փաստերը խառնում եմ հորինվածքի հետ: Ինը տասնորդական փաստ, մեկ տասնորդական հորինվածք, որպեսզի ամեն ինչը դասավորեմ իրենց տեղերում...
... Կա՛մ ինձ ուրքի տակ կզցեն, կա՛մ կսկսեն բոլորը գրել, ինչպես ես:

2. Բուկովսկի

XX դարի առաջին կեսին և հատկապես 1930-ական թվականներին ամերիկյան գրականությունն ապրեց բուռն վերելք: Դա պայմանավորված էր երկրի սոցիալ-տնտեսական, նաև կենցաղում տեղի ունեցած արմատական փոփոխություններով: Արդյունաբերության արագ զարգացումը փոխում էր Միացյալ Նահանգների տեսքը, փոքրիկ քաղաքներն ու ավանները կարճ ժամանակամիջոցում վերածվում էին արդյունաբերական հզոր կենտրոնների, նվաճում գյուղատնտեսության համար նախատեսված տարածքները, փոխվում էին ամերիկյան գավառի ավանդական բարքերը, մարդկանց մտածողությունը:

Պետք է նշել, որ 1920-ականների վերջից մինչև 1930-ականների կեսերը տևած ամերիկյան տնտեսական մեծ ճգնաժամն իր անջնջելի բացասական հետքերը թողեց նաև ստեղծագործող արվեստագետների վրա, ովքեր իրենց գեղարվեստական պատկերացումներում 30-ականների ճգնաժամը հաճախ ներկայացրել են որպես ամերիկացիներին բաժին ընկած դժբախտությունների սկիզբ, որին փոխարինեց և լրացրեց երկրորդ աշխարհամարտը: Սրանք երկու էապես տարբեր աղետներ էին,

որոնք իրենց խոր հետքը թողեցին Միացյալ Նահանգների հետագա զարգացման վրա: Այդ տարիները ամերիկյան գրականության համար համարվեցին նահանջի տարիներ:

1950-ական թվականների Ամերիկայում ձևավորված սոցիալ-տնտեսական, անկում ապրող քաղաքական ու բարոյահոգեբանական իրավիճակը երկրի մտավորական խավին զցել էին հոռետեսության գիրկը: Սակայն Միացյալ Նահանգներում քիչ չէին նաև այնպիսի արվեստագետները, ովքեր գտնում էին, որ պետք չէ ողբերգականացնել ստեղծված իրավիճակը. ամերիկացիների և նրանց առաջամարտիկների՝ գրողների մեջ եղել ու պահպանվում է ոչ միայն աշխարհը վերափոխելու ձգտումը, այլև մարդու հանդեպ հավատը, ինչը թույլ է տալիս տեսնելու, որ նրանք լրջորեն չեն կարող մտածել այն մասին, թե իբր աշխարհը դատապարտված է, կանգնած կործանման եզրին:

1960-ականների սկզբներին ամերիկյան հասարակական կյանքում տեղի ունեցան փոփոխություններ: Հետպատերազմական տարիների թմբիրից արթնացած ամերիկացիները բողոքի հզոր ալիք բարձրացրին ընդդեմ ամերիկա-վիետնամական պատերազմի, աննախադեպ թափ ստացավ տասնամյակներ ի վեր երկրում ձևավորված քաղքենիական մտածողության ու բարոյական կարծրացած նորմերի դեմ երիտասարդության պայքարը, տարբեր շերտերի՝ սեփական իրավունքների համար երկիրն ալեկոծող պայքարը, խթանվեց նաև սևամորթների շարժումն ընդդեմ ռասսայական խտրականության: Առավել ակտիվացան դեռ 1950-ականներից պայքարի մեջ մտած կանանց «նեոֆեմինիստական» կազմակերպությունները: Եվ, բնական է, որ հանրային-քաղաքական կյանքի ակտիվությունը չէր կարող չխթանել նաև արվեստն ու գրականությունը:

1950-ականներից սկսած Ամերիկյան թեատրալիզմը պատմական, հասարակական-քաղաքական մի դարաշրջան, որը միաժամանակ նշանավորվեց որպես երկրի գրականության պատմության զարգացման նոր փուլ, ուր պետք է արտացոլվեին այն բոլոր հույսերն ու հույզերը, որով ապրում էր ժամանակակից ամերիկացին:

Այդ ժամանակաշրջանում, իսկ ավելի ստույգ՝ 1956-ից, գրական ասպարեզ իջավ նաև ամերիկացի բանաստեղծ ու արձակագիր Չարլզ Բուկովսկին: Նա 20-րդ դարի ամերիկյան արձակի աննախադեպ երևույթներից էր, ով կոտրեց գրականություն ստեղծելու արդեն վաղուց քարացած կարծրատիպերը և նոր տեսանկյունից ներկայացրեց իրականությունն ու կյանքը: Նրա գրիչը կերպավորեց սոցիալական մարգինալի այնպիսի կերպարներ՝ թափառաշրջիկ-մուրացկան, նվաստացած հարբեցող, գիշերային բարերի պարուհի և այլն, որոնք թեև մինչ այդ էլ շատ գրողների կողմից դիտարկվել էին ընդհանուր առմամբ, սակայն երբևէ չէին դարձել գրական հերոսներ, հիմնական ֆիգուրներ, որոնց շուրջ հեղինակը կկառուցեր իր վեպի կամ պատմվածքի սյուժետային

առանցքը: Ահա ինչու նրա ստեղծած գրականությունն ընդունված էր անվանել «անդերգրաունդյան» կամ «մարգինալ»: Նրա նպատակն էր փոխել իրականության գեղարվեստական ընկալումների տեսանկյունները: Չ. Բուկովսկին հայտնի էր իբրև բիթնիկական շարժման համակիր, նրան հոգեհարազատ էր թափառական կենսակերպը, ազատ կյանքը՝ կարգ ու կանոնից, օրենքներից դուրս: Նրա ընկալմամբ իրականությունից դուրս այլ իրականություն չկա և լինել չի կարող: Այստեղ էլ թաքնված է նրա գրականության հմայքը, որը գրողին դարձնում է իրականության յուրօրինակ «լուսանկարիչ», իսկ նրա ստեղծագործությունը՝ «լուսանկարչական իրականություն», որտեղ կյանքը չէր գունազարդվում, եղելությունը չէր ձևախեղվում գրական ոճավորման հնարների ներքո, այլ ընթերցողին էր ներկայանում իր ողջ «մերկությամբ»՝ զավեշտով ու ողբերգականությամբ, իսկ մարդը երևում էր իր անատոմիականությամբ ու բնագույների դրսևորումներով: Այս և նման չափանիշներով գրական ասպարեզ մտած Բուկովսկին, բնականաբար, ցանկալի «հյուր» լինել չէր կարող հասարակության՝ իրենց քաղաքակիրթ համարող շրջանակների համար: Գրողը դա քաջ գիտակցում էր, սակայն իր առաքելությունը գրական անդաստանում պատկերացնելով՝ նա, միևնույն է, չէր պատրաստվում նահանջել՝ հաճախ թիրախ դառնալով ժամանակակից գրական ճաշակ թելադրող ասպարեզի հայտնի դեմքերի կամ հասարակության քաղքենի խավերի կողմից: Իբրև գլխավոր հերոս՝ Բուկովսկու վեպերում հաճախ կարելի է հանդիպել միևնույն կերպարին՝ Չինասկուն, ով նույն ինքը՝ Չ. Բուկովսկին էր: Նրա վեպերում և պատմվածքներում ինքնակենսագրական փաստեր էին, իսկ հերոսը՝ հիմնականում ինքը, կարծես հատուկ նրա համար, որ ընթերցողի կողմից բացասական թիրախավորման դեպքում կերպարի հավաստի լինելը կասկածի տակ չդրվի, և որ ամեն ինչ «լուսանկարված» լինի անձամբ իր՝ գրողի «իրականությունից»:

Չ. Բուկովսկու թե՛ պատմվածքները, թե՛ վեպերը աչքի չեն ընկնում ավելորդ հուզականությամբ, սակայն նրանցում ակնհայտ է հետնախորշերում մարող կյանքի, կործանվող մարդու, դեպի հատակը գլորվող անհատի հոգեկան դրաման իր ողջ սրությամբ: Բուկովսկին ցանկանում էր հետնախորշերից դուրս բերել այդ մարդկանց, նրանց խնդիրները, քննարկել դրանք գրականության համատեքստում: «Ես ունեմ ահռելի ծրագիր, որը, հավանաբար, ավելի շուտ կձախողվի,- ասում էր Բուկովսկին:-Ես արդեն վաղուց եմ որոշել ապրել մինչև 80-ամյա տարիքս կամ դրան մոտ ու մահանալ 2000 թվականին: ...Բայց իմ ահռելի ծրագիրն է՝ կերակրել նրանց իմ գրվածքներով ևս քսանհինգ տարի: Նրանց մոտ կսկսվի այնպիսի սրտխառնուք, որ նրանք ուրախությունից կոռնան, երբ ես մահանամ: Իսկ հետո ինձ կտանեն ձեռքերի վրա» /Bukowski Ch., 1971, p. 36/:

Այսուամենայնիվ, համոզված լինելով, որ մարդը լույսն «տաքուլա ռասա» չէ, որ նա ինքն է գրում իր ճակատագիր-թղթի վրա իրականության այն արտացոլումը, որում տեսնում է իրեն, Բուկոֆսկին կարծում էր, որ գրված «թղթեր» կան, որոնց պիտանիության հարցը կասկածի տակ դնելու կարիք անգամ չկա, որովհետև դրանց ոչ ոք ուշադրության չի արժանացնում: Դրանք հավաքվում ու դառնում են թափոն, անպետք թղթերի կույտեր՝ այդպես էլ մնալով չընթերցված, չհասկացված:

Իր վերջին վեպը գրողն այդպես էլ վերնագրում է՝ «Թղթի թափոն», որի ստեղծագործական շարժառիթների մասին խոսելիս ասա թե ինչ է գրում. «Այժմ ես փորձում եմ նոր գործ գրել: Ես այն կանվանեմ «Թղթի թափոն», կարող եմ անմիջապես ասել՝ ես իմ կյանքում դրանից առավել կեղտոտ ու մռայլ ոչինչ չեմ գրել: Մասնավոր խուզարկու Նիքի Բալեյնի մասին: Այս անգամ արդեն հերոսը ես չեմ: Հրատարակիչները նյարդայնանում են, քանի որ գիրքը շատ թունդ է գրված: Իմ կարծիքով՝ նրանք այնտեղ ինձ շատ են հավանել, այնպես որ ես նրանց այդ իմ «մակուլատուրայով» մի քիչ խուտուտ կտամ: Կա՛մ ինձ ոտքի տակ կզցեն, կա՛մ կսկսեն բոլորը գրել, ինչպես ես» /Howard Douglas, 1975, p. 17/:

Այս վեպին նախորդում էր գրողի հարուստ արձակը, որը բաղկացած էր մի շարք վեպերից և պատմվածքներից, որոնցից յուրաքանչյուրում բազմաթիվ էին պատմությունները, իրականության տեսարաններն ու կերպարները, որոնք միավորում էր հեղինակը ու դարձնում վեպ, իսկ երբեմն էլ՝ բաժանում ու դարձնում պատմվածաշար: Այս վեպը լույս տեսավ գրողի մահից հետո: Քննադատների գերակշիռ մասի համոզմամբ՝ այն ցույց էր տալիս, որ այդ ժամանակ արդեն սպառվել էին Բուկոֆսկու ինքնակենսագրական բոլոր պատմությունները: Սա այնքան էլ ճիշտ մեկնաբանություն չէր, քանի որ վեպում ներկայացված մի շարք պատմություններ ինքնակենսագրական էին, որոնց հեղինակն անդրադարձել էր իր նախկին երկերում, իսկ այս վեպում դրանք ներկայացնում է փոքր-ինչ ձևափոխված: «Ինձ թվում է հորինվածքով կամ ստեղծագործական գործունեությամբ ես առավել լավն եմ դարձնում իմ կյանքը,- ասում է Բուկոֆսկին քննադատ Մ. Շենետյեին,- ...ընդհանուր առմամբ այն ամենը, ինչը ես գրում եմ, մեծ մասամբ փաստեր են, բայց դրանք նաև չափազանցված են հորինվածքով, այս ու այն կողմ տարբեր ոլորաշեղումներով, որպեսզի մեկը մյուսից զանազանվի: Միգուցե դա ինչ-որ իմաստով խաբեություն է, բայց կարելի է անվանել նաև գեղարվեստական գրականություն: Գրականությունը խարդախություն է: Ես փաստերը խառնում եմ հորինվածքի հետ: Ինը տասնորդական փաստ, մեկ տասնորդական հորինվածքներ, որպեսզի ամեն ինչը դասավորեմ իրենց տեղերում...» /p. 25/:

Ասվածը չէր նշանակում, որ գրողը հրաժարվում էր իր ստեղծագործական սկզբունքներից կամ ոճից՝ «լուսանկաչական իրա-

տեսությունից»: Նրա երկերում հորինվածքը ոչ թե իրականության նենգափոխումն էր, այլ դրանց՝ որոշ դեպքերում «գունազարդումը», գրականությանը բնորոշ պատշաճ տեսքի հաղորդումը, իսկ դրա հիմքում միևնույն ճշմարտությունն է: «Քաղաքի առաջին գեղեցկուհին» պատմվածքների ժողովածուում ընդգրկված են թվով 30 պատմվածքներ, 4-ով պակաս, քան նախորդ՝ «սովորական» ժողովածուում, չնայած այս երկրորդը ծավալով ավելի մեծ է նախորդից: Դա պայմանավորված է այստեղ ընդգրկված պատմվածքների ծավալներով:

Իմի բերելով Բուկովսկու գրական ժառանգությունը՝ ֆրանսիացի լրագրող ու քննադատ Ռ. Բլանդենը գրում է. «Խմիչքն ու փոստատունը բերեցին նրան, որ Բուկովսկին գրեց արձակ և չափածո առավել քան քսան դառը, ցինիկ, անպարկեշտ ու մասամբ շատ զգացմունքային գրքեր: Նա գրում է նրանց մասին, ում առավել լավ է ճանաչում՝ սեզոնային բանվորների, թափառաշրջիկների, հարբեցողների, մարմնավաճառների, միամիտների ու քցողների՝ ծախսված մարդկանց, ծախսված կյանքերի, գինարբույքների ու հարբած ծեծկռտույքների մասին» /p. 89/:

Անդրադառնալով Բուկովսկու «Սովորական խելագարության պատմություն» և «Քաղաքի առաջին գեղեցկուհին» պատմվածքների ժողովածուներին՝ Ռ. Հայմփերթը գրում է. «Այս մռայլ ու տարօրինակ պատմություններն առաջ էին անցնում և իրենցով մթագնեցնում «կեղտոտ իրատեսության» ալիքը: Բուկովսկին գրում էր դեղնած բարերում ու գարշահոտով լցված ձիարշավարաններում հուսահատության ու անվերադարձ թառամած երագանքների մասին: Բայց, դրանից զատ, նա սկսեց գրել համակրանք շահող ճշտությամբ ու լիրիզմին սահմանակցող քնքշությամբ» /p. 91/:

Այն գրականագետների շարքում, որոնք իրենց կարծիքն են հայտնում Բուկովսկու գրական ժառանգության վերաբերյալ, առավել համարձակ ու համընդգրկուն է ամերիկացի Ջոն Ուիլյամ Քորինգթոնի տեսակետը. «Մեր դարի վերջում քննադատները հիմնավոր ձևով կարող են հայտարարել, որ Չարլզ Բուկովսկու աշխատանքները ջրբաժան դարձան XX դարի ամերիկյան պոեզիայում՝ փառանքյան-էլիտյան-օդենովյան ժամանակաշրջանի ու նոր ժամանակի միջև, երբ ուժ ձեռք բերեց մարդկային կենդանի ձայնը: Բուկովսկին փառանքյան-էլիտյան-օդենովյան ձևական, հաճախ փքուն առոգանությունը փոխարինեց մի լեզվով, որ զուրկ էր ոճաբանությունից, գրական փաստարկներից ու նրբագեղությունից, որոնք գրավել էին մեր ակադեմիական պոեզիան... Այն, ինչ Ռեմբոն արեց ֆրանսերենի համար, նույնն արեց Բուկովսկին անգլերենի համար» /p. 134/:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bukowski Ch., Answers 10 Easy Questions, F.A.Nettelbeck, Throb Two, Summer – Fall, 1971.
2. Hovard Douglas, Interview: Charles Bukowski, Grapevine (Fayetteville, Arkansas), Vol 6, No 19, January 29, 1975.

В. ХАЧАТУРЯН – *Новаторский подход Чарльза Буковского в американской литературе XX века.* – Беспрецедентным явлением в американской прозе XX века был Чарльз Буковский. Он сделал литературу доступной социальным маргиналам и создал образы литературных героев, которых ранее не существовало в американской литературе. Будучи последователем битнического движения, Буковский в то же время выделялся своеобразной бытовой философией, исключительной способностью отображать реальность с фотографической точностью. Он считается основателем литературы «андерграунда».

Ключевые слова: социальный маргинал, литература «андерграунда», «фотографическая реальность», сюжетная линия, академическая поэзия, «грязный реализм», художественное восприятие реальности, битническое движение, душевная драма личности

V. KHACHATURYAN – *Novel Approaches of Ch. Bukowski in the 20th Century American Literature.* – Ch. Bukowski was a prominent figure in the history of the 20th century American literature. He viewed life and reality from a new angle and sought to change the artistic perception of the reality. His central characters were social marginal. Ch. Bukowski had his own philosophy of life and depicted reality with photographic accuracy. He is considered to be the founder of “underground” literature.

Key words: social marginal, “underground” literature, “photographic reality”, story line, academic poetry, “dirty realism”, artistic perception of reality, beat movement, psychological drama of a human

Արմինե ՄԱՆՈՒԿՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ՈՒՆԱՄՈՒՆՈՅԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԻ ՈՐՈՇ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

Հոդվածի նպատակն է քննության առնել «98-ի սերնդի» ակնանվոր ներկայացուցիչ, փիլիսոփա, գրող, Միգել դե Ունամունոյի որոշ արձակ գործերին բնորոշ առանձնահատկությունները, դրանցում արծարծված հիմնահարցերը, թեմաները, առկա բախումները և հանգուցալուծումները: Առանձնակի ուշադրություն է դարձվում անհատ-հասարակություն-ընտանիք փոխհարաբերակցության խնդիրների վերաբերյալ Ունամունոյի դիրքորոշմանը:

Բանալի բառեր. *Միգել դե Ունամունո, «98-ի սերունդ», XX դարի իսպանական արձակ, իրատական նովել, պատմվածք, փիլիսոփայական գրականություն*

Միգել դե Ունամունոն իսպանական մշակույթի պատմության խոշորագույն ներկայացուցիչներից է. նրա անվան շուրջն այնքան շատ լեզենդներ են հյուսված, որ դժվար է տարանջատել իրական Ունամունոյին: Գրականության մեջ լինելով պարադոքսների սիրահար՝ ինքն էլ իրենից մի կենդանի պարադոքս էր ներկայացնում: Նրա անցած ուղին ճգնաժամերի ու հանկարծակի փայլատակումների մի ամբողջ շղթա է: Ունամունո գրողի վարպետությունը, թերևս, առավել ցայտուն երևում է նրա գրական գործերում, որոնք զերծ են ամեն տեսակի ճոռոմաբանություններից, կենցաղագրություններից, բնանկարների նկարագրություններից, որոնք քիչ էր մնում դառնային XIX դարի վերջի իսպանական արձակի բնորոշ գծերը: Գրողն ավելի շատ նախապատվություն տալիս է զգացմունքայնությանը և սուբյեկտիվիզմին, ինչպես նաև լեզվի և գիտակցության անքակտելի կապին, քանզի լեզուն ազգային գիտակցության արտահայտման կարևորագույն միջոցներից մեկն է. նոր բառերը մտքերին նոր երանգներ են հաղորդում:

Ունամունոն իր ստեղծագործություններում հատկապես կիրառում է կենդանի, խոսակցական լեզուն, և դրանով իսկ գրական լեզուն մոտեցնում ժողովրդախոսակցականին: Հարկ է նշել, որ, այնուամենայնիվ, Ունամունոյի մոտ առաջնայինը գաղափարն է. նա համարում է, որ գրողը պիտի գործ ունենա իրականության հետ, բայց էականը ոչ թե նյութական, կենցաղային իրականությունն է, որը սոսկ ֆոն է, այլ «ներքին» իրականությունը: Այդ պատճառով էլ ռեալիզմը իր ամենաբարձր իմաստով իրավիճակի, շրջապատի ճշգրիտ պատկերման մեջ չէ, այլ յուրաքանչյուր մարդկային «ես»-ի, ներքին կյանքի բացահայտման մեջ է: Այսինքն՝ գրողի խնդիրն է պատկերել մարդկային հոգին իր ողջ

խորությամբ: Ունամունոն ցանկանում է, որ իր հերոսներին ռեալ համարենք իրենց հոգեկան կերտվածքով: Նրա հերոսները մեծամասամբ զուրկ են նյութական հիմքից, մշտապես ձգտում են ինքնահաստատվել, և նրանցից յուրաքանչյուրը յուրովի է «հոգեվարք» ապրում:

Այսպես, «Խրատական երեք նովել և մեկ նախաբան» (1920) շարքի «Մարքիզ դե Լումբրիա» ստեղծագործության մեջ հեղինակը ուրվագծում է Իսպանիայի երգիծական պատկերը: Մարքիզ դե Լումբրիան, նույն ինքը՝ դոն Ռոդրիգո Սուարես դե Տեխադան, ճգնավորի պես է ապրում իր դամբարան հիշեցնող տոհմական տանը՝ մշտապես վախենալով արևից, թարմ օդից և գեղջկական հիվանդությունների վարակի աղբյուր հանդիսացող ճանճերից: Նրա ողջ կյանքը խստագույնս ենթարկված է ավանդույթներին, որոնց բաղկացուցիչ մասն է կազմում ամեն երեկո նույն ժամին ընտանիքի մտերիմ խորհրդականի հետ թղթախաղ խաղալը: Նրա երկու աղջիկների՝ Կարոլինայի և Լուիզայի համար այդ հեղձուցիչ աշխարհից դուրս գալու ելքը, թերևս, ամուսնանալն է: Եվ ահա նրանց միջև պայքար է սկսվում միակ արժանի հավակնորդի՝ Տրիստանի համար: Վերջին հաշվով հաղթանակում է ուժեղագույնը՝ Կարոլինան, ով նաև ընտանեկան ավանդույթների կրողն է:

Շարքի մյուս՝ «Երկու մայր» նովելը, նույն երևույթի այլ տարատեսակն է: Մայրության անհագ քաղցով համակված մի չբեր այրի իր սիրելանին ամուսնացնում է մեկ ուրիշի հետ՝ նախապես իրենը դարձնելով նրա ողջ կարողությունը, այնուհետև հարազատ մորից խլում է սեփական երեխային: Հատկանշական է, որ երկու գործերում էլ ուժեղ անհատներ են կանայք, իսկ տղամարդիկ կամքից զուրկ, պասիվ դեմքեր են. «Բայց ասա՛ ինձ, Ռաքե՛լ,– լացակումած ձայնով ասաց Խուանը,– ինչո՞ւ սիրահարվեցիր ինձ, ինչո՞ւ ինձ ջերմացրիր քո սիրով: Ինչո՞ւ ինձնից խլեցիր ողջ կամքս, ինչո՞ւ ինձ անշունչ տիկնիկ դարձրիր» /Ունամունո, 2016: 198/: Եվ բնավ էլ պատահական չէ, որ Ունամունոն նրանց կոչում է *Դոն Խուան* և *Տրիստան* անուններով: Դոն Խուանը մահանում է /Ունամունո, 2016: 221/, իսկ Տրիստանը հեզաբար գլուխը խոնարհում «հարյուրամյակների ծանրության տակ» /Ունամունո, 2016: 243/: «Գումարելիների» տեղերը փոխելը բացատրվում է ոչ միայն այն բանով, որ Ունամունոն պարադոքսների նկատմամբ հակում ունի, այլ նաև նրանով, որ նովելների գործողությունները ընթանում են ընտանիքի շրջանակում, իսկ ընտանիքում, ըստ Ունամունոյի, ակտիվ ստեղծարար ուժ է մայրը: Այդ պատճառով մայրության իրավունքի պայքարը կազմում է երկու ստեղծագործությունների ողբերգական բախումը: Մարդկային բարոյականության օրենքները այդ հասարակության մեջ հակամարդկային օրենքները քողարկելու համար են: Հենց այդ օրենքներն էլ որոշում են Կարոլինայի և Ռաքելի արարքները. հաղթանակ տանելով հանդերձ նրանք պարտվում են: Ռաքելը հաղթում է ոչ այն պատճառով, որ ինքն ավելի ուժեղ է իր մրցակցից, այլ որովհետև հարուստ է, քանի որ տիրացել

էր Դոն Խուանի ժառանգությանը, ի դեպ, որի օրինական ժառանգորդը պետք է լիներ Բերթան՝ Դոն Խուանի կինը: Կարոլինան կարողանում է հաղթել միայն իր հոր տոհմական տուն վերադառնալուց և նախկին ավանդույթները վերականգնելուց հետո:

Հատուկ դիտողականությամբ այս «հաղթող-պարտվող» հակասությունը մերկացվում է շարքի վերջին՝ «Իսկական տղամարդը», նովելում: Հերոսը՝ Ալեխանդրո Գոմեսը, հեքիաթային հարուստ, ոչնչի առջև կանգ չառնող, համառ, ամենակարող փողի իշխանության մարմնացումն է, ում համար ընդհանրապես նշանակություն չունեն բարոյական նորմերը. նա բացահայտ կերպով «գնում» է իր կնոջը: Նրա կարգախոսն է. «Եթե փող ունես, ապա բոլոր դռները բաց են քեզ համար» /Ունամունո, 2016: 253/: Հասարակության դեմ պայքարում հաղթողը հետևում է հասարակության գլխավոր չգրված օրենքներին, և դրա համար էլ «իսկական տղամարդ» է համարվում: Նրա հոգում մշտապես ներքին պայքար է ընթանում, գեղեցկուհի կնոջ՝ Խուլիայի հետ վարվում է «իրի» պես, միաժամանակ թաքցնում նրա նկատմամբ տաճած սիրո զգացումը, քանի որ սերը տեղ չունի անմարդկային «առուծախի» շրջանակներում: Խուլիան նույնպես արտասովոր կամքի և հոգևոր ուժի տեր կին է, նա չի ցանկանում սուկ ամուսնու «իրը» լինել: Ի վերջո, Խուլիայի սերը ամուսնու մեջ արթնացնում է մարդուն, և երբ նա մահանում է, Գոմեսն այլևս անկարող է լինում ապրել ու ինքնասպան է լինում: Եվ այսպես, հաղթողը կրկին հայտնվում է պարտվողի դերում:

Եթե Ունամունոյի վերոհիշյալ մի շարք գործերում ընտանեկան դրաման տեղի է ունենում ուրվագծված սոցիալական ֆոնի վրա, և այդ դրամաների հանգույցը որոշվում է տվյալ հասարակության «օբյեկտիվ» օրենքներով, ապա «Մորաքույր Տուլա» (1921) ստեղծագործության մեջ հեղինակը կարծես թե մեկուսացնում է իր հերոսներին շրջապատող իրականությունից և սահմանափակում մեկ ընտանիքի սահմաններում: Փողը, ազնվական նախապաշարումները չեն ազդում հերոսների գործողությունների վրա: Մորաքույր Տուլան, Ունամունոյի բնորոշմամբ, ժամանակակից Անտիգոնեն է: Նա քույրական սիրո մարմնացումն է, իր երջանկությունը զոհաբերում է դառնալով քրոջ՝ Ռոսայի և նրա ամուսնու՝ Ռամիրոյի երեխաների համար իսկական մայր: Այսինքն՝ չցանկանալով երեխաների կյանքում խորթություն մտցնել, հրաժարվում է ամուսնանալ Ռամիրոյի հետ և հավիտյան մնում է ընտանիքի պահապան՝ մորաքույր Տուլա: Բայց նա զուրկ է իր նախակերպարի էպիկական ամբողջությունից. նա XX-րդ դարի աղջիկ է, տանջվում է ողբերգական հակասությունների միջև: Մի կողմից՝ ինչպես ցանկացած կին, նա ձգտում է մայրանալ, մյուս կողմից էլ՝ տառապում է տղամարդկանց նկատմամբ տաճած տազնապալի վախից: Նա խոստովանում է. «տղամարդիկ, ցանկացած տղամարդ, և անգամ դու՛, Ռամիրո՛, միշտ ինձ վախ են ներշնչել: Նրանց մեջ ես միայն գազան եմ տեսել: Երեխաներն այլ բան են, բայց

տղամարդիկ: Ես միշտ խուսափել եմ տղամարդկանցից» /Unamuno, 1996: 97/: Միակ ելքը ուրիշի երեխաների համար մայր դառնալն է:

Ընտանիքի թեմային է նվիրված «Մահվան հայելի» պատմվածաշարի «Պարզասիրտ դոն Ռաֆայելը, որսորդ և խաղացող» պատմվածքը: Հարկ է նշել, որ սա Ունամունոյի մշտական թեմաներից մեկն է, քանի որ ըստ նրա, առողջ ընտանիքը ցանկացած հասարակության հիմքը պետք է լինի:

Ունամունոյին մտահոգող մյուս թեմաներից է դատարկապորտ քաղքենու կերպարը, որ ամեն ինչի պատրաստ է՝ միայն թե պաշտպանի իր քաղքենիական բարեկեցությունը: Գրողն իր ստեղծագործությունների մեջ հաճախ է մերկացնում նրանց. այսպես օրինակ, «Թռչակ» պատմվածքում պատկերում է, թե ինչպես են հայրն ու մայրը «կործանում» իրենց մինուճար որդուն հանուն իրենց բարեկեցության՝ լիովին անտեսելով նրա առողջության հարցը: Խեղճ տղայի կյանքը թռչակ ստանալու մի անվերջ պայքար է, որովհետև դա է իր ծնողների միակ հույսը, հանուն դրա է նա պարտավոր «գերազանց» ստանալ և ազատվել հաջորդ տարվա ուսման վարձից: Եվ մինչ որդին վատ սնունդից, մշտական պարապմունքներից հյուծվում է, հոր միակ մտահոգությունը երեկոները սրճարան այցելելն է, նա հոգու խորքում անգամ ուրախ է, որ չի աշխատում, նրան բոլորովին չի հուզում որդու ճակատագիրը: Ի վերջո, տղայի ուժերը դավաճանում են, և անկողին է ընկնում, սակայն սա էլ չի սթափեցնում ծնողներին: Նրանք սարսափահար մտածում են, որ հիվանդության պատճառով նա կարող է բացակայել դասերից և արդյունքում զրկվել թռչակից, երբ իրականում պիտի մտահոգվեին նրա առողջությամբ: Եվ չնայած բժշկի արգելքներին, դեռ չկազդուրված՝ նրան կրկին դասի են ուղարկում: Տղան, անզոր լինելով դիմակայել, կնքում է իր մահկանացուն: Այդժամ անգամ ծնողները խղճի խայթ չեն զգում, ասես բթացած լինեն նրանց ծնողական զգացումները, եթե, իհարկե, դրանք երբևէ գոյություն են ունեցել:

Փողի կործանիչ ուժի թեմային է նվիրված «Ռամոն Նոնատոն, ինքնասպան» պատմվածքը: Այն շատ հետաքրքիր կառուցվածք ունի, սկսվում է Ռամոնի ինքնասպանությամբ, և որպեսզի հեղինակը վեր հանի այդ ինքնասպանության պատճառը, մի քանի էջում ուրվագծում է նրա կյանքի գորշ ու տխուր պատմությունը, մանկության և պատանեկության տարիները, որոնք բացարձակապես ոչ մի ուրախ հուշ չեն թողել նրա հոգում: Եվ այդ ամենի մեղավորը վաշխառու հայրն է, որի կյանքի միակ նպատակը զարտուղի ճանապարհներով փող դիզելն էր: Նա անգամ ստիպել էր որդուն հրաժարվել նավաստի դառնալու իր երազանքից և փաստաբան լինել, որպեսզի իրեն օգնել վարելու իր գործերը: Եվ չնայած հոր անվերջ հորդորներին, թե ամեն ինչ միայն ու միայն հանուն իրեն էր անում, հանուն նրա բարօրության /Unamuno, 1913: 28-29/, որդին քաջ գիտակցում էր, որ դա նրա էությունն էր, որ նրան ընդամենը պատրվակ

էր հարկավոր, որպեսզի ինչ-որ կերպ արդարացներ իր մութ գործերը: Հորն այդպես էլ չի հաջողվում նրա մեջ սեր սերմանել փողի նկատմամբ, արդյունքում, Ռամոնը ինքնասպան է լինում:

1931թ. Ունամունոն տպագրում է «Սուրբ բարի Մանուել, տառապյալ» գործը, որը նրա արձակ ստեղծագործությունների մեջ արդեն աչքի է ընկնում արտաքին աշխարհի մանրամասների հագեցվածությամբ: Եվ դա բնավ էլ պատահական չէ. չէ՞ որ բնությունը, աշխատանքը, առօրյա հոգսերը ժողովրդի կյանքի բաղկացուցիչ մասն են կազմում, և այդ ժողովուրդը պատումի հերոսն է: Վավերդե դե Լուսերնա գյուղի բնակիչները ապրում են առտնի հոգսերով. այն է՝ հող են մշակում, բերք հավաքում, հին եկեղեցում աղոթք անում, երեխաներ մեծացնում: Նրանց կյանքն ընթանում է հավերժական թվացող իրականությունների՝ հողի, լճի, լեռան, լուսնի, աստղերի, մահվան, ծնունդի միջև, այդ պատճառով էլ կյանքի մասին նրանց պատկերացումները չափազանց պարզ են: Ունամունոն նորից անդրադառնում է իր երբեմնի «ներքին պատմություն» հասկացությանը և կրկին անգամ, ինչպես իր առաջին ստեղծագործություններում, հաստատում դրա կարևորությունը: «Ներքին» պատմությունը սովորույթ է, դարավոր ավանդույթ, որ բացառապես հիմնված է նյութական կենցաղի և կյանքի ամենօրյա դրսևորումների վրա: Գյուղացու հավատն աստծո հանդեպ բոլորովին էլ կապ չունի ենթագիտակցական ազդակների հետ: Եկեղեցի գնալը, աղոթելը, դժոխքի և դրախտի գոյությանը հավատալը սոսկ սովորույթ է, որ դարեդար փոխանցվում է մի սերդից մյուսին, դառնում կենսաձև ու սերտորեն կապվում այլ արմատացած սովորույթների հետ:

Պատումի գլխավոր հերոսը՝ քահանա Մանուելն է, մարդ, որին բոլորը «բարի» են կոչում իր անկեղծ մարդասիրության և անձնվիրության համար: Նա գյուղացիների հոգևոր հովիվն է, նրանց ուղեցույցը: Եվ ահա Վավերդե դե Լուսերնա է գալիս աթեիստ Լասարոն: Նրա հետ զրույցներից պարզվում է, որ հայր Մանուելը իրականում աստծուն չի հավատում: Նա շատ կուզենար հավատալ, սակայն անզոր է: Նրա ներաշխարհում մի կատարյալ դժոխք է տիրում, շատ լավ գիտակցում է, որ մարդը, միայն սեփական անձի անմահությանը հավատալով, կարող է հոգեկան անդորրի հասնել, և որպեսզի ժողովուրդն ապրի իր բնականոն կյանքով, արարի, բարգավաճի, անհրաժեշտ է, որ նրա հոգում խաղաղություն լինի: Փաստորեն, հանուն ժողովրդի հոգեկան խաղաղության, Մանուելը անասելի տառապանքներ է կրում, ստիպված ամեն օր եկեղեցական ծեսեր կատարում, ձևացնում իբր հավատում է: Լասարոն ուղղակի ցնցվում է՝ լսելով նրա խոստովանությունը: Ինքն էլ է սկսում դավանել, բայց ոչ թե եկեղեցական, այլ հայր Մանուելի ողբերգական, բայց միաժամանակ մարդասիրական կրոնը: Մանուելի մահից հետո նա է կատարում տառապյալի առաքելությունը:

Նկատենք, որ իր վաղ ստեղծագործություններում Ունամունոն փորձում էր հարաբերակցել «անհատ» և «հասարակություն» հասկացությունները, և եթե դրանցում առաջնայինը անհատն էր, այսինքն՝ անհատի վերածննդից էր կախված հասարակության վերածնունդը, ապա այստեղ հակառակ գործընթացն է: Անհատը ժողովրդի, հասարակության կարիքն է զգում, փորձում է նրանում հենարան գտնել: Ժողովրդին ծառայելը հայր Մանուելին փրկում է հուսահատությունից. մահից առաջ պահանջում է իրեն տանել եկեղեցի և մահանում է աղոթող ամբոխի գրկում /Unamuno, 1997: 139/: Մաքուր ժողովրդական հավատը վերջին պահին օգնում է նրան հաղթահարել չգոյության վախը:

Այսպիսին է, ըստ էության, Միգել դե Ունամունոյի վերոնշյալ ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը: Ինչպես տեսանք, մարդկանց մեջ մեծ գրողը և մտածողը փնտրում է ոչ այնքան կոնկրետ, որքան համամարդկային գծեր: Նրա հերոսները հաճախ առօրյա անձիք են, սակայն այդ առօրեականության մեջ արժարժվում և լուծվում են բարդ փիլիսոփայական խնդիրներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Chaguaceda Toledano A. (ed.) Miguel de Unamuno. Estudios sobre su obra. IV // *Actas de las VII Jornadas Unamunianas (27 a 29 de septiembre de 2007)*, Salamanca: Universidad de Salamanca, 2009.
2. Chen Sham J. El sistema de parentesco en la *Tía Tula*: la estructura avuncular // *Anuario de Estudios Filológicos*, 2000, N^o 23.
3. Juan-Navarro S. La reflexión sobre la inmortalidad en la obra de Unamuno: filosofía de la existencia, epistemología y pensamiento religioso // *Cuadernos de ALDEEU*, 1998, vol. XIV, N^o 1-2.
4. Ladrón de Guevara López de Arbina E. El pensamiento pedagógico de Miguel de Unamuno // *Revista Española de Pedagogía*, 2001, vol. 59, N^o 220.
5. Pedraza F. B. y Rodríguez M. Historia esencial de la literatura española e hispanoamericana. Madrid, México, Buenos Aires: EDAF, 2000.
6. Ramoneda Salas A. Antología de la literatura española del siglo XX, Alcobendas: Sociedad General Española de Librería, 1988.
7. Sánchez Gutiérrez D. En torno a Miguel de Unamuno // *Estudios del Patrimonio Cultural*, 2016, N^o 15.
8. Unamuno M. Del sentimiento trágico de la vida. Madrid: Austral, 1990.
19-րդ դարի վերջերին ամերիկյան թատրոնը դեռևս անկարող էր արտադրել որևէ նշանակալի դրամա: Թերևս կային որոշակի ունակություններ ունեցող դրամատուրգներ, ինչպես, օրինակ, Ք. Ֆիթչը, ում պիեսներն ուշարժան էին /«Ճշմարտություն», 1907/:

Հաջորդ տասնամյակներում ամերիկյան մի շարք դրամատուրգներ հայտնի դարձան մեծապես ամերիկյան տեսարանների պատկերումներով: Չնայած բոլոր այդ գրողները հակված էին դեպի զգացմունքայնությունն ու հետևում էին թատերական կանոնակարգերին: Փոքր թատրոնի շարժումը պատասխանատու դարձավ դրամայի ազատագրմանը՝ պայմանական կապանքներից, որոնք պարտադրվում էին կոմերցիոն թատրոնի կողմից: Եվ Յ. Օ'Նիլն էր, ով ուղի հարթեց գավառական, քաղաքային պիեսների ու դրամատուրգների հետագա ընթացքի համար:

Այսպիսով, փոքր թատրոնի շարժումը ճանապարհ է բացում արդի ամերիկյան դրամայի համար 20-րդ դարի հաջորդ տասնամյակներում: Ժամանակակից դրաման դանդաղ էվոլյուցիայի արդյունք է, որը հասել է իր փառքին տարբեր դպրոցների միաձուլումից հետո: Անհատ դրամատուրգները, ինչպես, օրինակ Թ. Ուիլյամսը, Ա. Միլլերը և Յ. Օ՛Նիլը տարբեր կերպ նպաստել են ժամանակակից ամերիկյան դրամայի զարգացմանը: 1915թ.՝ մինչև Ա. Միլլերի ժամանակաշրջանը, մի շարք այնպիսի պիեսներ են բեմադրվել, որոնք հազիվ թե տեղ գտնեին կոմերցիոն թատրոնում:

Եվ այսպես, 20-րդ դարի առաջին կեսին ամերիկյան դրամատուրգիան գրանցում է աննախադեպ էվոլյուցիա: Ուսումնասիրելով Առաջին աշխարհամարտից առաջ գրված դրամաները՝ հարկ է փաստել, որ ռեալիզմը նոր մակարդակի է հասնում Դ. Բելասկոյի /«Ոսկե Արևմուտքի աղջիկը», 1905/ և Ք. Ֆիթչի /«Քաղաքը», 1909/ նախապատերազմյան ժամանակաշրջանում ստեղծված պիեսներում: Նախապատերազմյան ժամանակաշրջանում ծավալվող դեպքերի, իրադարձությունների ու երևույթների իրատեսական պատկերմանն անդրադարձել են ժամանակաշրջանի մի շարք ստեղծագործողներ, այդ թվում՝ Յ. Ուոլթերը, ում 1909թ. գրված «Ամենահեշտ ճանապարհը» պիեսը ներկայացնում է մի կնոջ դրամատիկ կյանքի պատմությունը:

Ուշարժան է նշել, որ Առաջին աշխարհամարտի սկզբնական շրջանում եվրոպական արդի դրամատուրգիայի զարգացման միտումները որդեգրվում և ամրապնդվում են ամերիկյան թատերական բեմահարթակում: Հետագայում նկատվում են այն ջանքերը, որոնք փորձում են ցուցաբերել ամերիկյան դրամատուրգները՝ կապված դրամայի ոճի, ձևի ու բովանդակության փորձարարության հետ՝ միաժամանակ պահպանելով քաղաքական, հոգեբանական ու սոցիալական թեմատիկան: Կարելի է ասել, որ այդ փորձարարությունների շնորհիվ է, որ հաջողվում է ձևավորել ու ամրապնդել բուն ամերիկյան ավանդույթները, որի արդյունքում բրիտանական գրականության ազդեցությունն աստիճանաբար դուրս է մղվում /Krasner, 2007; Demastes, 1996/:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է արժանին մատուցել «Պրովինսթաուն փլեյերս կամ թատերգակներ» (խումբը հիմնադրվել է 1915թ. Մասսաչուսեթս նահանգի Պրովինսթաուն քաղաքում) խմբին, որն այն առաջին խմբերից է, ում ջանքերն անգնահատելի են՝ բուն ամերիկյան դրամատուրգիայի զարգացման գործընթացում: Հիշյալ խմբի իրականացրած առաջին քայլերի թվում առանձնանում են Սյուզան Գլասպելի «Մանրուքներ» (1916) և Յ. Օ՛Նիլի «Դեպի Արևելք, Կարդիֆ» (1916) պիեսները: Վերջինը, անտարակույս, տարբերվում է մինչ այդ ամերիկյան դրամատուրգիայում գոյություն ունեցած գործերից: Այն նշանավորվում է ոչ միայն Յ. Օ՛Նիլի՝ որպես նոր թատերագրի, ասպարեզ իջնելով, այլև ամբողջ ամերիկյան դրամատուրգիայի ծնունդով՝ իր

առանձնակի տեղը գրավելով ամերիկյան թատերագրության ամբողջ պատմության մեջ /Gray, 2011/: Յ. Օ'Նիլն այն հանճարն էր, այն փոփոխության պատասխանատուն, որը տեղի ունեցավ ամերիկյան թատրոնում 1920-1930-ականներին: Իր պիեսներով ու բազում նոր գաղափարներով նա իր ավանդն է ներդրել ու խորը ազդեցությունն ունեցել դրամայի զարգացման պատմության մեջ ու ամերիկյան թատրոնում: Նրա ստեղծագործություններում ակներև է ռեալիզմի և էքսպրեսիոնիզմի միաձուլումը:

Այսպիսով, 20-րդ դարասկզբի Միացյալ Նահանգներում տիրող դրությունը, սոցիալական հարաբերություններն ու առկա բազում հասարակական խնդիրները դառնում են ստեղծագործող դրամատուրգների գործերի հիմնական թեմատիկան: Այս տեսանկյունից ուշարժան է Ուիլյամ Վոն Մուդիի «Մեծ բաժանումը» (1906) պիեսը, որտեղ հեղինակը ներկայացնում և իրատեսորեն պատկերում է սենտիմենտալ Արևմուտքին հակադրվող ուրբանիզացված Արևելքը: Հասարակական թեմատիկան տեղ է գտնում Ռ. Քրոդերսի «Տղամարդու աշխարհը» (1909) և «Նյու Յորքյան գաղափարը» (1906) ստեղծագործություններում, որոնցում ակնհայտորեն արտացոլվում է հասարակության մեջ տիրող վերաբերմունքը երկու սեռերի՝ և՛ տղամարդկանց, և՛ կանանց նկատմամբ:

Դրամատուրգների գրչից չի վրիպում նաև ամերիկյան ընտանիքի թեմատիկան, նրա զարգացումը, հասարակության մեջ նրա դերի ու արժևորման խնդիրները: Այս թեման գերիշխող է մնում ամերիկյան դրամատուրգիայում մինչև 20-րդ դարի ավարտը /Gray, 2011/:

Հետաքրքրական է էքսպրեսիոնիզմի ներմուծումը Եվրոպայից Ամերիկա: Այն իր ազդեցությունն է հաստատում բոլոր ոլորտների, այդ թվում՝ արվեստի և հատկապես՝ դրամայի վրա: Էքսպրեսիոնիզմը դրականորեն է նպաստում ամերիկյան թատերական ոգու աճի ու զարգացման վրա: Այն խթանում է մի շարք մեծ ու փոքր տարաբնույթ փորձեր:

Էլմեր Ռայսի «Գումարման մեքենան» (1923) ստեղծագործությունն համարվում է էքսպրեսիոնիստական կատակերգության առավել ուշագրավ պատկերումը: Ռայսը նաև այն առաջին դրամատուրգներից է, ով ներկայացնում է համր ֆիլմի ազդեցությունը թատրոնի վրա՝ իր «Դատը» (1914) պիեսում, որտեղ կիրառվում է գործողությունների հետադարձ նկարագրության տեխնիկան:

20-րդ դարի 20-ականների վերջը և 30-ականները Միացյալ Նահանգներում տիրում է տնտեսական աննախադեպ ճգնաժամը՝ Մեծ դեպրեսիան, որը ներթափանցում է Միացյալ Նահանգների կյանքի բոլոր ոլորտները: Այս պայմաններում, անշուշտ, ամերիկյան դրամատուրգիան արձագանքում է ստեղծված իրավիճակին՝ դրամաներում արտացոլելով

ապագայի նկատմամբ անորոշության ու վատատեսական տրամադրություններ /Reynolds, 1986/:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ 1920-ականները նշանավորվում են արգասաբերությամբ՝ նյույորքյան բեմում պրոֆեսիոնալ պիեսների բեմադրման տեսանկյունից: Ինչպես ընդունված է կոչել, «փառավոր օրերի» ընթացքում 1920-30-ականների հանդիսատեսը ականատես է դառնում ամերիկյան խորաթափանց և հուզիչ դրամաների: Դժբախտաբար, Մեծ ճգնաժամի արդյունքում ծառայած բազում դժվարությունների հետևանքով փակվում են մի շարք թատրոններ:

Շարունակվող ճգնաժամի հարուցած խնդիրների արդյունքում 1930-ականներում ստեղծված դրամատուրգիական ստեղծագործություններում արտացոլվում են աջաթևյան գաղափարախոսների ծայրահեղական միտումները, ֆաշիստական տրամադրությունները և այլ հասարակական-քաղաքական խնդիրներ: Դրան զուգընթաց՝ Եվրոպայում զարգացող քաղաքական պրոպագանդան ուղղորդողները, նշյալ նպատակների համար օգտագործելով գրականությունն ու արվեստը, խթանում են բանվոր դասակարգի վերաբերյալ դրամաների զարգացումը:

Այսպիսով, ամերիկյան դրամատուրգիայի կայացման բովում ծնունդ են առնում մի շարք միանգամայն նոր գեղարվեստական խնդիրներ, որոնց հետագայում պետք է լուծում տային կրտսեր սերնդի դրամատուրգները /Brockett, Findlay, 1991/:

1930-ականների մեծանուն դրամատուրգների թվում հիշարժան են Մ. Անդերսոնը, Ք. Օդեթսը, Լ. Հելլմանը և այլք: Նշյալ ժամանակաշրջանում գրված ստեղծագործություններից առավել հայտնին Քլիֆորդ Օդեթսի «Ձախլիկին սպասելիս» (1935) դրաման է, որի հիմնքում ընկած են վերացական մտորումներ՝ կապիտալիզմի դրական և բացասական կողմերի մասին: Օդեթսը նաև գրել է 1930-ականներում տիրող իրականության ու ժամանակի մտահոգություններն արտահայտող «Արթնացի՛ր և երգի՛ր» (1935) պիեսը: Ակնառու է Քլիֆորդ Օդեթսի (1906-1963) մեծագույն ներդրումը ամերիկյան թատերագրության հետագա զարգացման ու վերելքի գործում: Վերջինիս մեծությունն այն է, որ նա խիզախորեն ընդվզում էր ընդդեմ ամերիկյան կեղծ գաղափարների ու «ամերիկյան սին երազանքների»՝ ջանալով ցրել մարդկանց պատրանքները: Նրա պիեսներն արտացոլում են նյութական հաջողության և բարեկեցության հանելու ամերիկացիների ձգտումների կործանումը: Օդեթսի պիեսների մեծ մասը նվիրված է ամերիկացի միջին խավի ներկայացուցիչներին, որոնք առավել շատ են տուժում երկրում արմատավորված ու խորացած տնտեսական ճգնաժամից / Smith, 1997/:

Ժամանակի ոգուն համահունչ և իրականության պատկերումով հանդես է գալիս Մաքսվել Անդերսոնը (1988-1959)՝ իր «Վատ եղանակ» (1936) սոցիալական դրամայով: Այս ստեղծագործությունը վերջինիս համար անցումային էր՝ ռոմանտիկական մելոդրամայից դեպի

ռոմանտիկական ողբերգությունը, որում Անդերսոնը առավելապես հենվում է ամերիկյան գրականության իրատեսական ավանդույթների վրա:

Հետագայում՝ 1930-40-ական թվականներին գրված տեսական աշխատություններում Թորոնթոն Ուայլդերը (1897-1975) ևս կարևորում էր անհատի ոգին ու հավատքը: Միմիանց հակադրելով վեպն ու պիեսը՝ Ուայլդերը նշում է, որ եթե առաջինը պատմում է «միակ դեպքի մասին, ապա թատերագրությունը մշտապես պետք է ձգտի դեպի ընդհանրացումները, որոնք էլ պետք է նպաստեն մարդու մեջ հավատի արթնացմանը» /Wilder, 1962/: Վերջինս թատրոնը դիտում է «ժամանակից դուրս» հարթության մեջ: Նա գտնում է, որ իրական թատրոնը իրավունք չունի ոչնչացնելու ժամանակը, պատմել կոնկրետ դարաշրջանի մասին: Թատրոնի մեջ պետք է ամփոփվի ամբողջ տիեզերքը և բոլոր ժամանակները: Լինելով «ունիվերսալ» թատրոնի ջատագով՝ նա կոչ է անում «ապանյութականացնելու» թատրոնը: Այս սկզբունքներն են ընկած Թ. Ուայլդերի «Մեր քաղաքը» (1938) պիեսի հիմքում, որտեղ հեղինակը ներկայացնում է հերոսների անհատական ու հասարակական բախումները, ովքեր տանջվում ու տանջում են իրենց շրջապատող մարդկանց, քանի որ ուժ և հնարավորություն չունեն իմաստավորելու իրենց կյանքը, մեկուսացել են աշխարհից, որում քարշ են տալիս իրենց անիմաստ գոյությունը:

Լիլիան Հելմանը (1905-1984) մեկն էր ամերիկացի այն դրամատուրգներից, որը Ք.Օդեթսի հետ միաժամանակ գրական ասպարեզ է իջնում 1930-ականներին: Իր երկու՝ «Անավարտ կինը» (1969) և «Սենթիմենտո» (1973) ինքնակենսագրական ստեղծագործություններում Հելմանը ներկայացնում է իր կյանքի ու դարաշրջանի ընդգրկուն պատկերը: Նա անդրադարձել է այն ճգնաժամի թեմային, որը դեռևս դարասկզբին սկզբնավորվել էր Ամերիկայի հարավային նահանգներում: Հարավի պլանտացիաները դարձել էին ոչ եկամտաբեր, մանր ու միջին ֆերմերները մեկը մյուսի հետևից սնանկանում էին: Այսպիսով, ճգնաժամը կարևորագույն սոցիալական թեմատիկա է հանդիսանում Հելմանի ստեղծագործության համար:

Երկրորդ Աշխարհամարտի ընթացքում (1939-1945) դրաման ջանում է միևնույն ժամանակ ո՛չ փախչել պատերազմական թեմաներից, բայց ո՛չ էլ պրոպագանդել այն: Հետպատերազմյան շրջանում ամերիկյան դրամատուրգիայում իրենց հաստատուն տեղն են գրավում Արթուր Միլլերը (1915-2005) և Թեննեսի Ուիլյամսը (1911-1983): Վերջիններիս ստեղծագործություններն ամերիկյան թատրոնում գերիշխում են ավելի քան մեկուկես տասնամյակ: Երկուսն էլ իրենց գործունեությունը սկսում են որպես քաղաքական դրամատուրգներ: Նրանց ստեղծագործությունը, ձևավորվելով 1930-ականներին, արձագանքում է այդ ժամանակաշրջանի տնտեսական և հասարակական իրողություններին: Թեև նրանց առաջին

գործերը Բրոդվեյում հայտնվում են 1940-ականներին, երկուսն էլ շարունակում են ստեղծագործել մեկ տասնամյակից ավելի: Նրանք գործ ունեին միևնույն թեմատիկայի հետ, բայց նրանց ստեղծագործական տեխնիկաները տարբեր էին /Krasner, 2006/:

Թ. Ուիլյամսը, ազդվելով ժամանակի մտահոգություններից, անդրադառնում է հոգեբանական խնդիրներին: Իր դրամաներում վերջինս անհատին վերցնում է հոգեբանական կոնֆլիկտների և ներքին իրադրությունների մեջ («Ապակե գազանանոց» (1944), «Յանկություն» տրամվայ» (1947): Իսկ Ա. Միլլերի դրամայում անհատը դիտարկվում է գլխավորապես հասարակական հարաբերությունների տեսանկյունից, որտեղ ձևավորվում է նրա կյանքն ու ճակատագիրը («Շրջիկ վաճառականի մահը» (1949), «Ծանր փորձություն» (1953):

Անդրադառնալով 1930-1950 թվականների ամերիկյան դրամատուրգիային, մասնավորապես՝ թատերագրությանը՝ հարկ է նշել «Գրուպ թիեթր» թատերական խմբի անժխտելի ավանդի մասին՝ 20-րդ դարի ամերիկյան թատերագրության հետագա զարգացման ու աննախադեպ մեծ վերելքի գործընթացում: Խումբը համագործակցել է Բ. Օդեսիսի հետ, բեմադրել Սիդնեյ Քինգսլիի առաջին՝ «Սպիտակ խալաթներով մարդիկ» (1933) պիեսը, Սարոյանի առաջին պիեսը (1939), ինչպես նաև՝ Փոլ Գրինի, Ջոն Հովարդ Լոուսոնի, Իրվին Թոուի, Ռոբերթ Օդրիի պիեսները: Խմբի առանձնաշնորհն այն է, որ կարողացել են ստեղծել մշտական թատերախումբ, որը դարձել է ոչ միայն դարաշրջանի խորհրդանիշը, այլև ամենատարբեր ուղիներով ազդեցություն է ունեցել հետպատերազմյան տարիների թատերական մշակույթի վրա /Bigsby, 2000/:

Հետագայում քաղաքացիական իրավունքների համար միտված շարժումները և 1960-ականների հակապատերազմական ցույցերը զարկ են տալիս ամերիկյան դրամայի զարգացմանը, և տարածաշրջանային ու փորձարարական թատրոնները առաջ են քաշում նոր տաղանդավոր դրամատուրգներ: Փորձարարական թատրոնների ընկերությունը, ինչպես նաև «Կյանքի թատրոնը» ու «Բաց թատրոնը» փորձարարությունն իրականացնում էին շարժուն խմբերի միջոցով, երբ դերակատարներն ու հանդիսատեսը գործում են նույն ֆիզիկական տարածքում: Ժան-Կլոդ Վան Իթալիի (1936) «Օձը» պիեսը (1968), ուր վերացվում են ֆիզիկական բաժանարար «գծերը» դերասանների և հանդիսատեսի միջև, վերստեղծվում են Աստվածաշնչյան պատմությունները՝ ներկայացնելով դրանք արդի իրադարձությունների միջոցով, ինչպես, օրինակ՝ Ջոն Ֆ. Քեննեդիի սպանության օրինակի միջոցով: Մեգան Թերրիի (1932) պիեսները, ինչպես, օրինակ, «Հանդարտվի, մայրիկ» (1965), փորձարարություն էր անում ավանդական դրամատիկական կառուցվածքի հետ՝ երբ դերասանը փոխակերպվելով խաղում է պիեսում մի քանի տարբեր դերեր, կապակցելով դրանք միմյանց և սահուն կերպով անցնելով մեկից՝ մյուսը /Klopsch, 2013/:

Հետագայում, դիտարկելով ամերիկյան դրամայի էվոլյուցիան, հարկ է նշել, որ արդեն 1970-ականների սկզբին ամերիկյան թատրոնում հաստատվում է պոստմոդեռնիզմը: Իսկ 1980-ականներին ամերիկյան դրամատուրգներն արդեն վեր են հանում արդիական թեմաներ ու խնդիրներ: 1990-ականներին ականատես ենք դառնում հուզիչ ընտանեկան դրամայի վերադարձին:

Այսպիսով, ամերիկյան գրականությունը, մոտ երեք հարյուր տարվա պատմություն ունենալով հանդերձ, համաշխարհային գրականությանն է տվել տաղանդավոր մի շարք գրողներ, ովքեր առանձնանում են իրենց հոգեբանական վերլուծություններով, յուրօրինակ գեղարվեստական մտածողությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bigsby C. W. E. A Critical Introduction to Twentieth-Century American Drama: Volume 3, Beyond Broadway. Cambridge: Cambridge University Press, 1985.
2. Bigsby C.W.E. History of American Theatre. Cambridge: Cambridge University press, 2000.
3. Brockett O., Findlay R. Century of Innovation: A History of European and American Theatre and Drama Since the Late Nineteenth Century (2nd Edition). United States: Prentice Hall, 1973.
4. Demastes W. W. Realism and the American Dramatic Tradition. USA: University of Alabama Press, 1996.
5. Gray R. A History of American Literature. UK: Wiley-Blackwell, 2011.
6. Jeffrey H. R. Early American Drama. New York: Penguin, 1997.
7. Klopsch N. The American Dream in 20th Century American Drama. Germany: GRIN, 2013.
8. Krasner D. American Drama 1945 – 2000: An Introduction. UK: Wiley-Blackwell, 2006.
9. Krasner D. A Companion to Twentieth-Century American Drama. UK: Wiley-Blackwell, 2007.
10. Reynolds R.C. Stage Left: The Development of the American Social Drama in the Thirties. New York: Whitston Pub Co Inc, 1986.
11. Smith S. H. American Drama: The Bastard Art. Cambridge: Cambridge University Press, 1997.
12. Wilder T. «Our Town» and Other plays. New York: Penguin, 1962.

Л. АЙТЯН – Генезис и эволюция американской драмы. – Данная статья посвящена развитию Американской драмы, включая период с 17 по 20 века. В статье рассматриваются исторические, политические и культурные события, которые способствовали развитию американской драмы и обеспечили ее генезис. Рассмотрено творчество ряда авторов конца 19 начала 20 веков.

Ключевые слова: американская драма, генезис, эволюция, британская модель, реализм, социальная драма, психологическая драма, американский экспрессионизм, художественные проблемы

L. HAYTYAN – The Genesis and Evolution of American Drama. – The present paper is devoted to the development of American drama including the period from 17 to 20 centuries. It examines historical, political and cultural realities which provide the development the American drama as well as its genesis.

Key words: American drama, genesis, evolution, British model, realism, social drama, psychological drama, American expressionism

Աննա ՊԱՊՈՅԱՆ
Իրինա ԲՈՒՌՆԱԶՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ՀԵՆՐԻ ՄԻԼԼԵՐԻ «ԱՅԾԵՂՋՅՈՒՐԻ ԱՐԵՎԱԴԱՐԾԸ»
ՎԵՊԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն հոդվածում քննության են առնվում ամերիկացի գրող-արձակագիր Հենրի Միլլերի «Այծեղջյուրի արևադարձը» վեպի հիմնախնդիրները: Գրողը մարտահրավեր է ներդրում հասարակության բարքերին: Ըստ հեղինակի՝ բանականությունը կյանքի կործանման սկիզբն է, որի պատճառով կյանքը վերածվում է գոյաբանական սխեմայի: Արդյունաբերականացումը ներկայացվում է որպես բանականության իշխանության կործանարար գաղափար, որը մեկուսացնում է մարդկանց: Միլլերն իր հերոսներին ներկայացնում է որպես շրջապատող իրականության զոհեր, իսկ նրանց ըմբոսությունը համարում է ներքին պարտության վկայություն:

Բանալի բառեր. փիլիսոփայական հայեցակարգեր, բանականություն, քաղաքակրթություն, իդեալական կենսակարգ, «ամերիկյան երազ», քաղաքակրթություն և բանականություն, պատերազմ, շրջապատող իրականության զոհեր

XX դարի առաջին կեսի ամերիկյան գրականության զարգացման միտումները պայմանավորված են ԱՄՆ-ում ընթացող սոցիալ-քաղաքական արմատական փոփոխություններով: Արդյունաբերության սրընթաց զարգացումը հիմնովին փոխում է երկիրը. փոքր քաղաքներն ու բնակավայրերը վերածվում են արդյունաբերական հզոր կենտրոնների և, հետևաբար, փողվում են ավանդական բարքերն ու բարոյական սկզբունքները, ինչպես նաև դրանց նկատմամբ մարդկանց վերաբերմունքը: Արդյունաբերությունը դիմավորեցին գրկաբաց. դա մի փրկություն էր, որ պետք է ազատեր մարդկանց ծանր ֆիզիկական աշխատանքից՝ տալով նրանց հնարավորություն վայելելու կյանքը և ստանալու հոգևոր սնունդ: Սակայն տեղի ունեցավ հակառակը. արդյունաբերությունը, որ պետք է ծառայեր մարդկանց, ստրկացրեց նրանց, գողացավ նրանց ժամանակը՝ դարձնելով նրանց անշունչ մեքենաներ: Անշուշտ, գրական աշխարհը անմիջապես արձագանքեց այս ամենի արդյունքում առաջացած փոփոխություններին:

Ամերիկացի գրող-արձակագիր Հենրի Միլլերը հայտնի դարձավ գրական աշխարհին, երբ անցյալ դարի 30-ականներին տպագրվեցին նրա աղմկահարույց ստեղծագործությունները: «Խեցգետնի արևադարձը» և «Այծեղջյուրի արևադարձը» վեպերը շոկային ազդեցություն գործեցին հասարակության վրա, սակայն, միևնույն ժամանակ, կային բազմաթիվ

կողմնակիցներ, որոնք այդ երկերը համարում էին հանրության արատավոր բարքերին նետված մարտահրավեր:

«Այծեղջյուրի արևադարձը» (1939) վեպը, որին կանդադառնանք այս հոդվածում, բավական բարդ ստեղծագործություն է. այնտեղ խաչվում են փիլիսոփայական զանազան հայեցակարգեր ու հեղինակի ինքնակենսագրական պատումներ, և այս ամենը ներկայացվում է մոդեռնիզմին բնորոշ նարատիվի ոճով: Ամենից առավել վեպում նկատելի են Ֆ. Նիցշեի և Օ. Շպենգլերի գաղափարների ազդեցությունները: Իր վեպում Հ. Միլլերը փորձում է համադրել նախնադարյան աշխարհին ու ժամանակակից քաղաքակրթությունը: Մարդն այստեղ ներկայանում է որպես տիեզերական էներգիայի փոփոխման վերջնական արդյունք և մարմնավորում է բանականի ու զգայականի տարանջատում: Վեպը շարադրվում է հեղինակի անունից, և նա, դիմելով ժամանակակից մարդկանց, ասում է. «Դուք հենվում եք ավելի շուտ ոչ թե իրականության, այլ բացառապես մտածողության վրա» /Miller, 1961: 89/:

Ըստ Հ. Միլլերի՝ բանականությունը, որը մարդու գոյության սկզբունք է, իրականում կյանքի մարման, կործանման պատճառ է: Կենսաբանական բնական էներգիայից այն վերափոխվել է սեփական գոյը պահպանելու համար մղված պայքարի: Իսկ դա իր հերթին վերածում է կյանքը սոսկ մի սխեմայի, որը պարտադրում է իշխանության և բռնության իդեալներ: Այս գաղափարն ավելի պատկերավոր դարձնելու համար Հ. Միլլերը դիմում է Օսվալդ Շպենգլերի «Եվրոպայի մայրամուտը» գրքում հիշատակվող քաղաքաբնակ մարդու օրինակին: Կյանքի դեգրադացիայի միլլերյան հայեցակարգում Շպենգլերի գաղափարները շատ կարևոր տեղ են գրավում: Վերջինիս պես Հ. Միլլերը ևս գտնում է, որ աշխարհին ու նրա մշակույթն ապրում են դեգրադացիա՝ ընդունելով «քաղաքի տեսք»՝ բանական անդեմ մի ձև, որը կտրված է հողից ու ավանդույթներից /Шпенглер, 1993: 165/:

Այդօրինակ դեգրադացիայի և կործանման խորհրդանիշ է դառնում ոչ միայն քաղաքի բնակիչը, այլև առաջին հերթին երկնաքեր շենքը: Երկնաքերի կերպարը «Այծեղջյուրի արևադարձը» վեպում շատ հաճախ է առաջին պլան գալիս, քանի որ այն առավել ցայտուն է արտահայտում քաղաքակրթության մասին միլլերյան պատկերացումը: Քաղաքակրթության ամբողջ էությունը արձակագրի համար խտացված է երկնաքերի պատկերում. հեղինակն այն համեմատում է դիակի և դամբարանի հետ. «Երբ անցնում ես կամրջով, երկնաքերերը լույս են արձակում ինչպես ֆոսֆորով պատված դիակները..., և նոր երկնաքերները նոր դամբարաններ են. աշխատի՛ր դրանց ներսում և այդտեղ էլ մահացի՛ր» /Miller, 1961: 73/:

Հ. Միլլերը վեպում պատմում է իր մանկության տարիների մասին, որոնք անցել են Նյու Յորքի Բրուքլին թաղամասում: Վերջինս ունի վաղեմի պատմություն, որի պատճառով հեղինակն այն ընկալում է որպես

պատմական ժամանակագրության ելակետ: Այստեղ դեռևս պահպանվել է աշխարհի օրգանական ամբողջականությունը: Մտորելով այդ մասին՝ Հ. Միլլերը հանկարծ հիշում է իր զրույցները մանկության տարիների ընկեր Մաքսի հետ, որը պատմում էր նրան ամերիկյան Օդեսա քաղաքի մասին: Հեղինակի երևակայության մեջ բնությունն ու շրջապատող բոլոր իրերը հանկարծ դառնում են մի անբաժանելի ընդհանրություն. «Օդեսայի մասին Մաքսի պատմածները իմ մեջ արթնացնում էին մի այնպիսի բան, ինչից ես զրկվեցի մանկության տարիներին: Այն հիշեցնում էր ինձ մեր փոքրիկ թաղամասը Բրուքլինում, մի թաղամաս, որն այնքան մեծ նշանակություն ուներ ինձ համար, և որտեղից ինձ այդքան՝ վաղ պոկեցին՝ արմատի հետ միասին» /Miller, 1961: 89/:

Հեղինակն ապրում էր քաղաքի հյուսիսային և հարավային մասերի սահմանագծի վրա, որը նրա համար դարձել էր սահման իրականի ու երևակայականի միջև: Այդ թաղամասում կյանքը դեռ չէր կորցրել իր էությունն ու ամբողջականությունը: Այս իդեալական կենսակարգը հետագայում սկսում է քայքայվել և Բրուքլինի «գողտրիկ աշխարհը» արագ սկսում է դառնալ արդյունաբերական քաղաք: Իշխանությունները խորհրդանշորեն վերանվանում են Հ. Միլլերին հարազատ Երկրորդ հյուսիսային փողոցը՝ Մետրոպոլիտեն ավենյուի, և այդ օրվանից այդ շրջանն սկսվում է կարգավորվել. այնտեղ սկսում է իշխել միայն բանականությունը: Այդ պահից սկսած՝ Հ. Միլլերի համար հին աշխարհը միաժամանակ կործանվում է: Դա առավել ակնհայտ է դառնում, երբ հեղինակը, կանգնած ջրի ափին, հանկարծ նկատում է ջրի հայելու մեջ Նյու Յորքի ապահովագրական ընկերության շենքի հսկայական աշտարակը. այդ պահին նա գիտակցում է, որ Երկրորդ հյուսիսային փողոցն այլևս գոյություն չունի:

Բանականը և գիտակցականը Հ. Միլլերը համարում է տիեզերական էներգիայի բացասական դրսևորում, որը հերոսին զրկում է ազատությունից: Հեղինակը նյարդայնացած ժխտում է կյանքը, ինչի ապացույցն է նրա ըմբոստ էությունը: Հ. Միլլերի հերոսի ընդվզումն ու բողոքը միշտ թելադրված է այն հանգամանքով, որ նա չի կարող հաստատել իր «ես»-ը: Որպես օրինակ կարող է ծառայել Հ. Միլլերի ապրումների նկարագրությունը, երբ նրան մերժում են ընդունել Հեռագրային ընկերություն. «Ես պառկեցի քնելու,- գրում է Միլլերը,- զգալով խորը ցավ և ավելի ու ավելի բորբոքվելով այն ցավագին մտքից, որ նրանք մերժեցին ինձ՝ Հենրի Վ. Միլլերիս, բարձրագույն ուսսայի փայլուն կրթված ներկայացուցչիս, որը հավակնեց աշխարհի ամենահասարակ ու աչքի չընկնող աշխատատեղին» /Miller, 1961: 89/:

Փաստորեն, գրողը՝ իբրև անհատ, հատուկ վերաբերմունք ունի շրջապատող աշխարհի նկատմամբ: Ակնհայտ է, որ այդ շրջապատի վերաբերմունքի նկատմամբ Միլլեր-գործող անձն անտարբեր չէ. նրա «ես»-ը դեռ մերժված չէ և մշտապես պատրաստ է փորձել ինքնահաստատվել: Վաղ

առավոտյան Հ. Միլլերը սխալում է այդ ընկերություն, հաջողեցնում է հանդիպել գլխավոր տնօրենի հետ և արդյունքում ստանում է լավ պաշտոն: Այսպիսով, նա միանում է գոյության համար մղված պայքարի համընդհանուր հոսանքին: Դրանով իսկ նա բռնում է ամերիկյան երազի իրագործման ուղին:

«Ամերիկյան երազ» հասկացությունը բազմիցս է հիշատակվում այս վեպում: Սակայն հեղինակը ցույց է տալիս, որ եթե Ամերիկայի կայացման վաղ շրջանում այդ արտահայտությունը նշանակում էր ինքնաիրականացում, սեփական ներքին հնարավորությունների կիրառում, ապա այժմ այն սկզբունքորեն փոխվել է և ենթադրում է սոցիալական ու նյութական հաջողության հասնելու, հասարակության վերնախավում հայտնվելու ձգտում:

«Այծեղջյուրի արևադարձ»-ում նման գաղափարի օրինակ է Հյուսիս-ամերիկյան հեռագրային ընկերությունը, որը Հ. Միլլերի համար վեպում մարմնավորում է բանականության կործանարար գաղափարը: Սա մի դաժան, բայց կուռ համակարգ է, որն ստիպում է մարդկանց ծառայել իր նպատակին և դրանով իսկ խորթացնում է նրանց միմյանց նկատմամբ: Այդ ընկերությունը, ըստ Հ. Միլլերի, կառավարվում է մարդկանց՝ կյանքի, հաջողության, ամերիկյան երազի իրականացման համար պայքարի ապակառուցողական ոգով: Սակայն Միլլեր-գործող անձը միակն է, որը պահպանում է մարդկային փոխգործակցության և փոխօգնության բնագրը:

Հեղինակը գտնում է, որ այդ ընկերությունը, որը խորհրդանշում է քաղաքակրթությունն ու բանականությունը, ապակառուցողական է թեկուզ միայն այնքանով, որ ձգտում է բնությունը ենթարկել իրեն, դարձնել այն սոսկ սխեմատիկ պատկեր: Այս տեսանկյունից քաղաքակրթությունը հանդես է գալիս որպես աշխարհի համար կործանարար ուժ, որպես բռնություն աշխարհի հանդեպ:

Բռնությունն ու իշխանության հասնելու ձգտումը ներթափանցում են կյանքի այն փուլը, երբ մարդը հայտնվում է քաղաքակրթության «տարածքում» /Маркузе, 2003: 81-82/: Տիեզերական կենսաձին էներգիան փոխվում է մահվան էներգիայի: Հ. Միլլերը վեպում գրում է. «Ամբողջ երկիրը անկառավարելի է. այն բիրտ է ու պայթյունավտանգ: Դա զգացվում է անգամ օդում, կլիմայում, այս քարե ջունգլիներում» /Miller, 1961: 62/: Այսպիսով, կարելի է պնդել, որ քաղաքակրթությունը Հ. Միլլերի համար քայքայման ու կործանման հոմանիշ է: Այդ իսկ պատճառով Առաջին աշխարհամարտը բնական վիճակ է նրա համար: Տիեզերադեմոնական (Հ. Միլլերի եզրույթը) հեռագրային ընկերությունում աշխատանքը հավասարազոր է ռազմական գործողություններին մասնակցելուն:

«Այծեղջյուրի արևադարձը» վեպում Հ. Միլլերը անդրադառնում է նաև բուն պատերազմի թեմային, սակայն այն ներկայացնում է միջնորդված: Նա նշում է, որ քաղաքակրթությունը միշտ հղի է պատերազմով, և

այդ իսկ պատճառով այն հակասում է կյանքի ներքին մղումին, այդ թվում նաև մարդկային կյանքին: Մարդն ի վիճակի չէ դիմակայել պատերազմի մշտական լարմանը և սկսում է դիմադրել արտաքին աշխարհի բռնությանը: Խնդրո առարկա վեպում կա մի տեսարան, ուր Միլլեր-գործող անձը տրամվայում հանդիպում է պատերազմի վետերան մի սերժանտի: Տեսնելով սպային՝ վետերանը մեծ աղմուկ է բարձրացնում ու անեծքներ հղում երկրի պետական և ռազմական ղեկավարության հասցեին, ինչպես նաև բոլոր նրանց, ովքեր ուղարկել էին նրան մահվան: Նա, ի լուր բոլորի, բացականչում է, որ եթե ևս մեկ պատերազմ լինի, աշխարհի ոչ մի ուժ չի կարողանա նրան ստիպել մասնակցել /Miller, 1961: 64/:

Միլլեր-գործող անձն այս տեսարանում առաջին անգամ զգում է իրական պատերազմի շունչը: Հեղինակն արտահայտում է իր այն համոզմունքը, որ պատերազմի հանդեպ վախն ու ատելությունը դեպի իշխանությունները բացատրվում են կենսաբանական կյանքի երկարաձգման ու գոյը պաշտպանելու բնազդային մղումով: Այս մղումն իր հերթին է՛լ ավելի է ներքաշում մարդուն իր գոյի համար պայքարի մեջ, որից վերջինս մահու չափ հոգնած է:

Վետերան սերժանտի հոգեկան այդօրինակ պոռթկումը, երբ նա պոկում է իր կրծքի վրայի շքանշանները, վկայում է այն մասին, որ նա ի վիճակի չէ հաղթահարել ներքին հակասությունը. մի կողմից՝ նա չի ուզում պատերազմին մասնակցել, սակայն մյուս կողմից՝ չի կարող գոյություն ունենալ պատերազմից դուրս: Ըստ Հ. Միլլերի՝ պատերազմի հանդեպ ատելությունն առաջին հերթին ատելությունն է բուն կյանքի և շրջապատող աշխարհի հանդեպ: Հեղինակը համոզված է, որ, չնայած բողոքին, վետերան սերժանտը կվերադառնա իր քաղաքացիական պարտքը կատարելուն, քանի որ նա պատասխանատու չէ իր սեփական կյանքի համար. այն բարդում է իշխանության վրա:

Գոյապաշտության խնդրի ևս մեկ «ցայտուն» օրինակ է ծառայել տասներկու «փոքրիկ մարդկանց» մասին պատմությունը, որը ներկայացնում է Միլլեր-գործող անձը: Այստեղ խոսքը տիեզերադեմոնական ընկերության համեստ ու լուռ ծառայողների մասին է, որոնք այլաբանորեն հիշեցնում են տասներկու առաքյալներին: Նրանցից յուրաքանչյուրի մեջ Հ. Միլլերը, կրկին ընդգծենք, գտնում է կենսաժին տիեզերական էներգիա, որը հետագայում վերածվում է մահաբեր էներգիայի: Սուրբը, ըստ Հ. Միլլերի, կարող է իր անհատական կամքի ճիգերով փոխել աշխարհի բնույթը: Սակայն վեպում դա տեղի չի ունենում. «սուրբերն» իրենք են դառնում շրջապատող իրականության զոհերը: Նրանցից մի քանիսը կերպարանափոխվելով դառնում են հանցագործներ (Քարնախ, Քլաուզեն), մյուսները (Հուփթ, Շուլդիգ)՝ այլ հանցագործների կամ հանգամանքների զոհեր: Մերձավորների սպանությունը մարտահրավեր է՝ նետված անտանելի ագրեսիվ աշխարհին: Այդ ըմբոստությունը ներքին պարտության վկայությունն է: Դա պարտադրված է մարդուն բուն

իրականության կողմից, այն նույն իրականության, որի հիմնական «շարժիչ ուժը» գոյության համար մղվող պայքարն է: Հ. Միլլերը ցույց է տալիս, որ համակարգը մարդուն վարակում է պայքարի ու բռնության ներքին մղումով:

Վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ XX դարի սկզբի ամերիկյան հասարակության կյանքը և բարոյական սկզբունքների վերափոխումը ակնհայտ բացասական ազդեցություն են թողնում անհատի ներաշխարհի վրա, և Հ. Միլլերի հերոսները թե՛ հոգևոր, թե՛ գիտակցական կյանքում փորձում են ընդդիմանալ համակարգին, չնայած ի վերջո մնում են վերջինիս կամազուրկ խամաճիկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Frye N. Anatomy of Criticism. Princeton (N.J.): Princeton University Press, 1957.
2. Miller H. Tropic of Capricorn. New York: Grove Press, 1961.
3. Маркузе Г. Эрос и цивилизация. Москва: АСТ, 2003.
4. Мендельсон М.О. Основные тенденции развития современной литературы США. Москва: Наука, 1973.
5. Шпенглер О. Закат Европы. Очерки морфологии истории. Т. 1. Москва: Мысль, 1993.

Ա. ՓԱՍՅԱՆ, Ի. ԲՈՐՆԱԶՅԱՆ – Օ նեկոտորых основных проблемах в романе Генри Миллера «Тропик козерога». – В данной статье рассматриваются основные проблемы, затронутые в романе «Тропик козерога» американского писателя-прозаика Генри Миллера. Писатель бросает вызов существующим устоям общества, где сознание является началом конца жизни, а жизнь превращается в схему выживания. Индустриализация представлена разрушительной силой сознания, которая отстраняет людей друг от друга. Герои романов представлены жертвами окружающей действительности, а их внутренний бунт свидетельствует об их внутреннем поражении.

Ключевые слова: философские концепты, разум, цивилизация, идеальный образ жизни, Американская мечта, цивилизация и разум, война, жертвы окружающей реальности

A. PAPOYAN, I. BURNAZYAN – *On Some Basic Issues in Henry Miller’s “The Tropic of Capricorn”*. – The present paper is an attempt to tackle the basic issues in Henry Miller’s novel ‘Tropic of Capricorn’. The writer challenges the existing moral values and standards. The destroying power of consciousness turns life into a scheme of survival and industrialization alienates people. The characters of the novel are victims of the surrounding reality, and their inner rebellion is an evidence of their defeat.

Key words: philosophical concepts, consciousness, civilization, ideal lifestyle, American Dream, civilization and consciousness, war, victims of surrounding reality

Անուշ ՍԵԴՐԱԿՅԱՆ

Երևանի պետական համալսարան

ՕԼԴՈՍ ՀԱՔՍԼԻԻ ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻՑ ԵՎ ԽԱԲՈՒՍԻԿ ԱՇԽԱՐՀԸ

Հողվածն անդրադառնում է նոր հասարակության կերպման սկզբունքներին, այն դժվարին ժամանակաշրջանում, երբ փոխվում են մարդկային հարաբերությունների առանցքային մոդելները: Օլդոս Հաքսլիի «Հրաշալի, նոր աշխարհ» ուրոպիան ցույց է փայլիս այն վրանգավոր փոխակերպումը, որ կատարվում է մարդու մտքի հետ՝ խաբուսիկ հովվերգությունը վերածելով իրական մղձավանջի:

Բանալի բառեր. ֆորդիզմ, դիստոպիա, նորացում, կրոնական միստիցիզմ, մասսայական սպառման հոգեբանություն, սեքսուալ հեղափոխություն

Մարդու փոխակերպումը պոստմոդեռնիզմի և մոդեռնիզմի շեմին, մարդակենտրոն մշակույթը վերափոխում է գաղափարակենտրոն մշակույթի: Գրողական արվեստը դադարում է լինել զուտ ստեղծագործություն և իր մեջ ամփոփում է նաև փիլիսոփայությունը: Այն գրողները, որոնք իրենց երիտասարդությունը, մանկությունը սկսել են մոտավորապես քսանական-երեսունական թվականներին և ստեղծագործական հասունության հասել վաթսունական-յոթանասունական թվականներին՝ վերցնելով ստեղծագործական այդպիսի լայն ընդգրկում, կարողացան կողմնորոշվել դարաշրջանի ձևափոխման և նոր հայեցակարգերի հաստատման շրջապտույտի մեջ: Ամենահետաքրքիր կերպարը այդ համատեքստում դառնում է Օլդոս Հաքսլին՝ իր “Brave New World” /Huxley, 1998/ հրաշալի կախարդական աշխարհի վեպով, որտեղ Օլդոս Հաքսլին, փաստորեն, դրեց հասարակության աստիճանական փոփոխության հարցը: 1962 թվականին հեղինակը ելույթ ունեցավ Բերքլիում և ասաց.

«Ես վաղուցվանից եմ հետքաքրքրված այդ խնդրով և ուզում եմ մի տիպի դիտարկում անել՝ այն գուշակությունները, որ ես արել էի երեսուն տարի առաջ, այն ժամանակ լրիվ ֆանտաստիկ էին թվում, երեսուն տարի հետո այդ բոլոր ֆանտաստիկ կանխագուշակումները կամ իրականություն են դարձել, կամ իրականություն դառնալու ճանապարհին են»:

"Since then, I have continued to be extremely interested in this problem and I have noticed with increasing dismay a number of the predictions which were purely fantastic when I made them thirty years ago have come true or seem in process of coming true" /Huxley, 1962/.

Հասարակությունը մտել էր նոր փուլ. պատերազմների, կոգնիտիվ դիստանսի, մարդու տեղի և դերի հստակեցումներից հետո մարդկությունը մտել էր այլևս սպառողական հասարակության փուլ, որը

պայմանավորված էր երկու գործոններով՝ առաջինը ավելի սոցիալական օբյեկտիվ գործոնն է՝ մարդիկ թևակոխել էին քիչ թե շատ խաղաղ և ետպատերազմական դարաշրջան, որը մարդու առջև դնում էր առօրեական խնդիրների լուծման և կայունության պահանջ: Երկրորդն այն էր, որ մարդկությունը վերջապես հասել էր ինքնաբավության բավարար աստիճանի, որ քիչ թե շատ ճանաչել էր ինքն իրեն, և այդ ճանաչումից հետո արդեն խնդիր էր ունենում կարճաժամկետ, էկզիստենցիալ, մարդակենտրոն գոյությունից գալ հանրային և նոր ընկալման, որի ընտրության ժամանակ մարդկությունը գերադասեց ընդունել սպառողական հայեցակարգը: Սպառողական հայեցակարգի էությունը շատ պարզ է. այն ձևավորվում է հետևյալ նշանաբանի ներքո՝ հենց հիմա և հենց այստեղ: Մարդն ամեն բան ուզում է ունենալ, և արդյունքում ստանում է ինչ ուզում է հենց տեղում՝ մտնելով հասարակության զարգացման մոդեռնիզացիայի մի շատ խաղաղ, բայց և ստագնացիոն փուլ՝ մեքենայական փուլը, երբ մարդը զոհաբերում է իր անհատական, իր աստվածային ստեղծագործ «ես»-ի կոնցեպտուալ հիմքերը նոր գաղափարախոսությանը՝ մեքենային կամ ավտոմատիզացիային:

Նման զոհաբերությունների համակարգը հին ավանդույթ էր՝ սկզբում զոհ էին մատուցում էին Աստծուն, հետո՝ Մարդուն, հետո զոհաբերում էին Հոգուն, Գիտելիքին, Ինֆորմացիային: Այդ ամենին հաջորդեց մեքենայացման փուլը, որը Օլդոս Հաքսլին անվանեց ֆորդիզմ, ուր մարդիկ զոհաբերություն էին մատուցում մեքենային, մեխանիզմին:

Հիմնավորումը հետևյալն էր՝ Ֆորդը իրոք այդ կոնվեյերային համակարգի ստեղծմամբ մարդուն դարձրեց կոնվեյերի կցորդ: Այսուհետ մարդը արվեստագետ չէր, կամ նկարիչ, կամ ստեղծագործող: Մարդը մի ֆունկցիայի, մի ընդհանուր հարահոսի (կոնվեյերի) բաղկացուցիչ պտուտակ էր (винтик): Եվ ահա այդ պտուտակային կենսակերպի ներմուծման մեջ Օլդոս Հաքսլին ազդարարեց մարդկության կործանման տեսլականը: Մեքենայացման տրանսֆորմացիոն գործընթացի մեջ մարդը դադարում է լինել ուղղահայաց տրանսցենդենտալ էակ՝ դառնալով զուգահեռ տրանսցենդենտալ էակ:

Երբ մարդը ուղղահայաց տրանսցենդենտալ է նա հազթահարում է իրեն և իր Շարժումն ու զարգացումը կապում է վերին գաղափարի հետ: Վերին գաղափարն ու բարոյագիտական կատարելակերպը կարող են ունենալ տարբեր անուններ՝ Գաղափար, Տիեզերք, Աբսոլյուտ՝ նշանակություն չունի. դա մարդու ինքնահաղթահարումն է այն ճանապարհին, որ նրան ուղղորդում է դեպի վեր: Հորիզոնական տրանսցենդենցիան ուղղակի ծառայել է, հասարակությանն անհրաժեշտ այն աշխատանքի բարեխիղճ կատարումը, որ ամեն կերպ խրախուսում է հանրային (զուգահեռ) կապերն ու հարաբերությունները: Այդ սկզբունքների համաձայն մարդը պետք է սոսկ կատարի իր պարտականությունները, ժամանակին գնա աշխատանքի, իմանա կորպորատիվ ու հիերարխիկ

կողմն ու իր տեղը այդ համակարգում: Մինչդեռ ուղղահայաց տրանսցենդենցիան ենթադրում է, որ մարդը պետք է մտածի իր տեղի և դերի մասին՝ կյանքում և տիեզրական հիերարխիայում: Մեքենայական հասարակության մեջ ուղղահայաց կապեր հաստատելու բոլոր փորձերը խստիվ պատժվում են, որովհետև խափանում են ֆորդիստական մեքենայի աշխատանքը: Օլդոս Հաքսլին իր վեպում ստեղծում է մի երկիր, դիստոպիա, որտեղ յուրաքանչյուր մարդուց հանում են ստեղծագործական մղումը, ծրագրավորում ծննդյան պահից՝ բացառելով մարդու ստեղծագործական ինքնարարման և ազատ կամքի առեղծվածը:

Ավանդաբար հայտնի չէ, թե ինչպիսի տղամարդու և ինչպիսի կնոջ միացման արդյունքում ինչ եզակի էակ կծնվի, և ամեն անգամ այդ էակը կանխատեսելի չէ: Այդ անհայտությունն իր մեջ կրում է սպասման անակնկալ խորհուրդ, ծննդյան գաղտնիք, որ տիեզրական ամենամեծ գաղտնիքներից է:

Զգալով այդ առեղծվածի վտանգը նոր «արդյունավետ» հասարակությունը, ծնունդ է տալիս կանխատեսելի էակների՝ իրենց հարատարբերակումներով՝ Ալֆաներ, Բետտաներ, Գամմաներ, Դելտաներ, Իփսիլիոններ, որտեղ Ալֆաները մշակում են տեխնոլոգիաներ (ոչ գաղափարներ), Բետտաները դրանք կատարում են, Գամմաները դասավորում են կատարվածը, Դելտաները ավելի սևագործ աշխատանք են անում և այդպես շարունակ:

Ակնհայտ են զուգահեռները մեր ժամանակակից հասարակության մոդելի հետ, և այդ տարիներին նման կանխատեսում անելը, հիրավի, մարգարեական էր: Հաքսլին մի հարցազրույցում ասում էր, որ ինքն էլ չէր սպասում, որ ֆանտաստիկայի ժանրում գրված վեպի շատ աներևակայելի մանրամասներ կդառնան իրականություն: Յայսօր էլ հասարակությունը շարունակում է զարգանալ զուգահեռական տրանսցենդենցիայի կանոններով, տրանսցենդենտալ-զուգահեռ կապերի մեջ. սպառման հոգեբանության գերակայության պայմաններում սկսում է բացառվել ինքնուրույն մտածելու կարողությունը: Իրական հարատև գաղափարները հենվում են անցյալի /ավանդույթի/ վրա և նայում ապագային: Ստեղծագործությունը իրար է կապում ժամանակները, և այդ հիշողության կապի մեջ են անթեղված մարդկության տառապանքի, փորձի և վերելքի ակունքները: Հիշողության, պատկանելության բացակայությունը, միայն ներկա ժամանակի զգացողությունը, ժամանակավոր կապերը վայրկենական հաճույքները բացառում են տառապանքը: Այդ ամենի համար իդեալական աշխարհում ստեղծված է իդեալական թմրանյութ՝ Սոման:

Սոման կապ ունի մարմնական ֆունկցիաների հետ: Այն թմրանյութն է, որը մարդուն անջատում է իր հիմնական խնդրից, որը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ՝ մարդը մահկանացու է և պիտի մեռնի: Այդ գաղափարը տարբեր փիլիսոփայությունների և տարբեր երկրների և

տարբեր ստեղծագործությունների միջոցով ներկայացված է եվրոպական մտքի պատմության մեջ:

Օլդոս Հաքսլին բացահայտում է, թե ինչպիսին կարող է լինել մարդկությունը, որին ձերբազատել են մահկանացու լինելու սարսափից: Այդպիսի մարդկություն մի անգամ ճշգրտորեն պատկերել է Ջոնաթան Սվիֆթը իր «Գուլլիվերի ճանապարհորդությունները վեպում /Սվիֆթ, 1958/:

Ճանապարհորդը Լապուտայում տեսնում է անմահների (ստրուվոբրուզներ): Այդ մարդիկ անմահ են և չունեն հիշողություն, որովհետև մարդկության համար կա անմահության միայն այդպիսի ստորացուցիչ տարբերակ: Եթե մարդը արդեն թևակոխում է անմահության շեմը, նա երկու տարբերակ ունի՝ կամ աստված է, կամ ստեղծագործող էակ, որի գործերն ապրելու են իրենից հետո: Անմահության ուրիշ շեմ չկա, անմահությունը՝ մոռացության և անգիտության խավարում խարխափելն է: Հաքսլիի նոր աշխարհում մահվան միտքը հասարակությունից հանված է, հանված է ծանր հիվանդությունների վախը, որովհետև ժամանակակից բժշկությունը հաղթահարել է բոլոր հիվանդությունները: Եվ ամենակարևորը, մահվան մեջ մտել է կանխատեսելիության մի գործոն՝ բոլորը մահանում են վաթսուն տարեկանում՝ բացառելով տանջալից սպասումները: Ծնունդի հետ մեկտեղ այդ հասարակության մեջ վերացված է նաև մահվան առեղծվածը:

Երբ մարդկությունը ապրում է բարեկեցության, «երջանկության»՝ ֆիզիկական, տրանսցենդենտալ, հորիզոնական երջանկության մեջ, ինքնագիտակցումը անհնար է: Եվ Օլդոս Հաքսլին իր «Նոր աշխարհը» վեպում նշում է, որ մեր ժամանակակից հասարակությունը գտնվում է նոր հիպնոսի ազդեցության ներքո: Այս չափաբաժիններով ժամանակակից մարդը կլանում է հեռուստատեսության պրոպագանդան և գովազդը, ակոհիլը, ծխախոտը, այսինքն՝ այն բոլոր բաները, որոնք կազմում են հավաքական Սոման, որոնք շեղում են մարդուն ինքնագիտակցման ստեղծագործ մղումներից: Մյուս հիպնոսացնող գործոնը (հատկապես սեքսուալ հեղափոխությունից հետո) սեքսուալ հարաբերությունների մարմնական բաղադրիչն է՝ էմոցիոնալ կապվածության բացակայության պարագայում: Այդ սեքսուալ հարաբերությունների ազդեցության չափաբաժինը ներկայացնող մի տպավորիչ դրվագ կա՝ նոր հասարակության գաղափարախոսության կրող Լինայնան սիրահարվել է հնդկացիների ռեզերվացիայից «նոր աշխարհ» մուտք գործած տղային և ուզում է անհապաղ սեռական միակցություն, որպեսզի, համաձայն իր հասարակության կանոնների, միանգամից անցնի հորիզոնական տրանսցենդենցիայի՝ վայելքը և հաճույքը նրան հասանելի լինեն առանց վերապահումների: Բայց, հիմա հորիզոնական տրանսցենդենտալ Լինայնան հանդիպում է ուղղահայաց տրանսցենդենտալ մեկին, որը «վայրենի» է՝ տվյալ հասարակության ընկալումների համաձայն (կարդացել է Շեքսպիր,

կարդացել է տարբեր գրքեր, որոնք արգելված են այդ հասարակության մեջ): Անձի զարգացումն ու հորիզոնական տրանսցենդենցիայից ելքը բացառելու նպատակով նոր կախարդական աշխարհում արգելված էին բոլոր գրքերը: Յուրաքանչյուր ոք փիլիսոփայական կամ գրական երկի ընթերցանության փորձի դեպքում անմիջապես աքսորվում էր կղզի: Վեպի հերոսներից մեկին՝ Հելմհոլցին, սպառնում են աքսորել Շեքսպիր կարդալու համար: Ի պատասխան այդ սպառնալիքի, նա ասում է, որ Շեքսպիրի հետ համաձայն է գնալ ցանկացած կղզի, որովհետև չի ուզում ապրել մի տեղ, որտեղ տիրում է բացարձակ անմտություն: Օլդոս Հաքսլին ստեղծում է մի խորհրդանշական պատկեր, որտեղ մարդը հայտնվում է իր իսկ ստեղծած միայնության կղզում: Ուղղահայաց տրանսցենդենցիայի մեջ, եթե մարդ գերադասում է կապ ունենալ որոշակի վերին գաղափարի հետ, նա անխուսափելիորեն տեղափոխվում է կղզի և դա իր սեփական անհատականության և գաղափարականության մեկուսացումն է: Իզուր չէ, որ այդքան շատ են Վերածննդից հետո կղզիների խորհրդանշանները արևմտյան գրականության մեջ («Գուլիվերի ճանապարհորդությունը», «Ճանճերի տերը»):

«Վերադառնալով երկխոսությանը՝ Ջոնը և Լինայնան իրար հետ խոսում են ամեն մեկն իր հարթության մեջ.

– Դու ինձ սեր ես խոստովանում, Ջոն:

Բայց դեռ ժամանակը չէ սեր խոստովանել,-ասաց Ջոնը համարյա ձեռքերը կոտրտելով: Սկզբում մենք պետք է... Լսեք, Լինայնա, Մալպասոմ սիրահարներն ամուսնանում են:

– Ինչ են անում, – Լինայնան արդեն սկսում էր բարկանալ, – ինչ ցնդաբանություններ է դուրս տալիս այդ տղան..

– Ընդմիջտ երգվում են միասին լինել..

– Ինչպիսի ցնորամտություն, -Լինայնան լրջորեն ցնցված էր... »
/Հաքսլի, 1999/

Սպառման հասարակության ներկայացուցիչը ոչ մի կերպ չի հասկանում, թե ինչ կապ ունի տվյալ պահի հաճույքի հետ ինչ-որ երկարաժամկետ հավատարմության գաղափարը: Մյուս երկխոսությունը հակադրում է սպառման և զգայական նվիրման գաղափարները:

«Մեջքն ուղղելով, նա համարձակություն հավաքեց, շրջվեց Լինայնայի կողմը՝ նրա դեմքին տեսնելով տարակուսանք ու դժգոհություն:

– Ես ամեն ինչ կանեմ, – ասաց նա ավելի շփոթվելով: – Միայն հրամայեք: Զվարճություններ կան, որ ծանր ջանքեր են պահանջում, բայց դրանից ավել թանկ են դառնում: Եթե հրամայեք, հատակն էլ կավլեմ...

– Դրա համար փոշեծծիչներ կան, – ասաց Լինայնան, – ավլելու կարիք չկա:

– Կարիք չկա, բայց ցածրացնող աշխատանքը կարող է վեհ երանգ ստանալ: Եվ ես էլ կուզենայի այն վեհանձնորեն կատարել:

– Բայց եթե փոշեծծիչներ կան:

– Բայց խնդիրը հո փոշեծծիչները չեն...

Այդ երկու մարդիկ խոսում են և մեկի հարթությունը ուղղահայաց է, մյուսինը՝ հորիզոնական: Եվ ակնհայտ է, որ այդ խաչաձևման մեջ ստեղծվում է նոր սիմվոլիկա մարդու, որ հնարավորություն չունի գնալու դեպի վերև, ունենալ ավելին, քան իր անմիջական կենսական պահանջների բավարարումը: Դրա համար նոր հասարակության նոր կրոնական սիմվոլը, այն խաչն է, որի վերնամասը հատված է: Լատինական T տառը մի սիմվոլ է, որ դիստոպիայում պատկերված մարդիկ կախում են իրենց վզերին, իբրև պաշտամունքի խորհրդանիշ: Մեքենայացված և գաղափարազրկված հասարակությանը դեռևս անհրաժեշտ են կրոնական պաշտամունքի ծիսական առարկաներ, բայց միտքը՝ գաղափարը, որը այդ պաշտամունքին հաղորդում է իմաստ և դարձնում խորհրդանիշ, բնավ անհրաժեշտ չէ: Այսինքն՝ ինչքան էլ ցավալի և վիճարկելի լինի, ստացվում է այնպես, որ հասարակությունը ուրիշ ճանապարհ չունի:

Մտածելու, տառապանքի, սիրելու մեջ հարց է առաջանում, թե, վերջիվերջո, կա՞ սեր տառապանքից այն կողմ: Օլոոս Հաքսլին դրա պատասխանը հրաշալի տալիս է՝ տառապանքից այն կողմ սեր չկա, և տառապալից սիրո մեջ բացահայտվում է սիրո էությունը: Մտածելուց այն կողմ Աստված չկա, և մտածելու մեջ բացահայտվում է Աստծո էությունը: Ընդհանրապես, Օլոոս Հաքսլին անցել է շատ հետաքրքիր ճանապարհ, որը տիպական է բոլոր անգլո-ամերիկյան մոդեռնիստ հեղինակների համար՝ ցինիզմից, մոդեռնիզմից, ավանգարդիզմից դեպի կրոնական միստիցիզմ (ճիշտ էլիոթի պես): Անհատը ստիպված է պայքարել ոչ միայն մեկուսացման և օտարման այլև սեփական «ես» -ի տարրալուծման դեմ: Այդ պայքարը տարվում է ավտոմատացված, մեքենայացված, անշունչ հասարակության դեմ, որի վտանգները ապշեցուցիչ կերպով կարողացել է տեսնել, կանխատեսել և վերլուծել Օլոոս Հաքսլին:

Վեպի ժամանակին անհավանական թվացող նկարագրություններն իրենց արտացոլումն են գտնում ներկա կյանքում (ազատ սեռական հարաբերությունները ծնող և երեխա հարաբերությունների մեջ): Էկզիստենցիալիզմի դեպքում ծնող և երեխա, ծնող-Աստված, մարդ-ծնող խզումը ցավազին է և տանջալից, մինչդեռ մեքենայացված հասարակության մեջ այդ խզումը ողջունելի է: Մի պարզ պատճառով. մարդը, ով սիրում է, տառապում է և չի կարող լինել արդյունավետ աշխատող, անխափան պտուտակ, իսկ նոր հասարակության նոր կրոնը արդյունավետ աշխատող լինելն է: Այդ նոր հավատամքից շեղվելու դեպքում մարդը խափանում է ողջ հասարակության կարգը: Անձնական դրաման կարելի է բացառել միայն մի ճանապարհով՝ բացառելով անձը:

Օլոոս Հաքսլիի վեպը երգիծական վեպ է (դա երևում է նաև վերնագրից): Այդ երկի մեջ միախառնված են բազմաթիվ ժանրեր՝ ինչպիսիք են ֆանտաստիկայի ժանրը, ուտոպիան, անտիուտոպիան և տիպիկ մոդեռնիստական վեպի ողջ կոմպոզիցիոն համակարգը: Բայց

Օլրոս Հաքսլին ավարտում է այդ վեպը նրանով, որ, այնուամենայնիվ, այլախոհները գնալու են կղզի և այդ կամավոր աքսորը սեփական «ես»-ը պահպանելու միակ ուղին է:

Հրաշալի, կախարդական աշխարհը մնալու է իր տեղում, նա շարունակելու է զարգանալ իր օրենքներով, իսկ այն մարդիկ, ովքեր իրենց թույլ են տվել լինել անհատ, այլ ոչ թե մեքենայի պտուտակ, մեկուսանալու են բայց չեն պարտվելու:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սվիֆթ Ջ. Գուլիվերի ճանապարհորդությունը, Երևան, «Անտարես», 2014:
2. Aldous Huxley 1962 U.C. Berkeley Speech on “The Ultimate Revolution”, <https://publicintelligence.net/aldous-huxley-1962-u-c-berkeley-speech-on-the-ultimate-revolution/>
3. Huxley A. Brave New World. New York: HarperCollins Publishers, 1998.

А. СЕДРАКЯН – Многообещающий и обманчивый мир Олдоса Хаксли. – В статье раскрывается основная идея романа Олдоса Хаксли “О дивный новый мир”. Современный мир зиждется на принципах автоматизации и механизации в ущерб общечеловеческим и моральным ценностям. Человеческая личность подвергается изменениям, которые приводят к общечеловеческому кризису. Для описания этих перипетий Хаксли ввел термин “фордизм”, который отражает новый идеал современности. Однако этот идеал, насаждающий механическую и автоматическую реальность, в конечном итоге приводит к разложению человеческого начала.

Ключевые слова: фордизм, дистопия, инновация, религиозный мистицизм, психология массового потребления, сексуальная революция

A. SEDRAKYAN – Aldous Huxley’s World of Promise and Delusion. – The paper reveals the new principles of construing the modern world in the era of automatic and mechanical innovations, which drastically change the world of human values and morals. Human individuality undergoes irreversible changes which inevitably lead to personal and humanitarian crisis. Huxley introduced the new cultural term “fordism” to exemplify the shift in human nature to the dystopian ideal of mankind which eventually turns into a excruciating morbid loss of spirituality.

Key words: fordism, dystopia, innovations, religious mysticism, psychology of mass consumption, sexual revolution

Наталья ГОНЧАР-ХАНДЖЯН

Анаит АКОПЯН

Ереванский государственный университет

**ПСИХОЛОГИЧЕСКАЯ ПРОБЛЕМАТИКА ПОВЕСТИ
СТИВЕНСОНА «СТРАННАЯ ИСТОРИЯ ДОКТОРА ДЖЕКИЛА И
МИСТЕРА ХАЙДА»**

В данной статье делается попытка раскрыть и проанализировать образы персонажей повести Стивенсона в сопоставлении с транзактным анализом Э. Берна, объединив нотариуса Амтерсона, представляющегося поначалу самостоятельным субъектом действия, и пару Джекил-Хайд в единый нерушимый тандем, где каждый соответственно предстает составной частью единой личности.

Появившаяся в английской литературе XIX века как плод воображения (imagination) и озарения, прозрения (inspiration, insight) писателя Р. Стивенсона «Странная история доктора Джекила и мистера Хайда» для аналитической психологии XX века стала хрестоматийным примером расщепления, диссоциации, «множественности» личности и как социальной характеристики вообще, и как психической болезни индивидуума, подвергшегося вирусу раздвоения. Художник настолько верно уловил правду происходящего, переживаемого, что, например, автор работ по диссоциации личности Н.Мак-Уильямс рекомендует «Странную историю...» как чтение, дающее возможность познакомиться с диссоциативным расстройством личности без соответствующего клинического опыта.

